

ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վարպետ ուսուցչին բնորոշ հոգեբանամանկավարժական որակներ:
Սովորողի տարիքային հոգեբանության կարևորությունը 63

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ն. ԽՐԻՍՅԱՆ

Կրթական բարեփոխումները շարունակական գործընթաց են..... 70

ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Էջմիածնի ժառանգավորաց դպրոց..... 75

ՀԱՆԴԵՍՈՒՄ ՀՈԴՎԱԾՆԵՐ ՏՊԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ..... 78



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

N 10

2012

Գլխավոր խմբագիր՝ Արսեն ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Արմեն ԱՇՈՏՅԱՆ - ԿԳ նախարար
Մանուկ ՄԿՐՏՉՅԱՆ - ԿԳ փոխնախարար
Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ - ԳԹԿ առաջադրանքների մշակման և մեթոդական
օժանդակության բաժնի պետ
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ մշակումների և կազմակերպական բաժնի պետ
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ
Աշոտ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր
մասնագետ

Խմբագրական կազմ՝

Լուիզա ՄԱԹՎՈՍՅԱՆ
Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4
Հեռ. (+374 10) 553265
E-mail: gtk2005@web.am
www.atc.am

Բովանդակություն

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2011թ. ավագ դպրոցների 11-րդ դասարաններում անցկացված
արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծություն 3

Մ. ՀԱԼԱԶՅԱՆ, Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

<<Ի՞նչ գիտենք մեր մասին>> հայագիտական առարկաներից ազգային
ստուգատեսի թեստավորման արդյունքների վիճակագրական
վերլուծություն 33

ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լ. ՄԱԹՎՈՍՅԱՆ

Մանկավարժական թեստ կազմելու տեխնոլոգիան 45

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հարցումը և կրթության որակի բարելավումը 50

«Հանրակրթություն. գնահատում և թեստավորում» տեղեկատվական-վերլուծական հանդեսում հոդվածներ տպագրելու կարգը

«Հանրակրթություն. գնահատում և թեստավորում» հանդեսը հրատարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft World ծրագրով, Arial Armenian տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է նաև համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:

Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրություն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրատարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

«Հանրակրթություն. գնահատում և թեստավորում» հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարաններում:

2011թ. ավագ դպրոցների 11-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծություն

1. Ընդհանուր տեղեկություններ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2011 թ. սեպտեմբերի 28-ի թիվ 123 Ա/Ը, հոկտեմբերի 12-ի թիվ 127 Ա/Ը, հոկտեմբերի 12-ի թիվ 128 Ա/Ը, նոյեմբերի 1-ի թիվ 130 Ա/Ը հրամանները՝ 2011 թ. հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 18-ը ՀՀ ավագ դպրոցների 11-րդ դասարաններում անցկացվել է արտաքին գնահատում «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից: Արտաքին գնահատմանը մասնակցել է ընդհանուր հաշվով 88 ավագ դպրոցի 11-րդ դասարանի 10031 աշակերտ: Գրավոր աշխատանքները «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից անցկացվել են Սյունիքում, Լոռիում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Արարատում՝ հոկտեմբերի 3-7-ը, Շիրակում, Վայոց Ձորում, Տավուշում, Կոտայքում, Արմավիրում՝ հոկտեմբերի 13-21-ը, Երևանում՝ նոյեմբերի 3-18-ը:

Գրավոր աշխատանքների ստուգությունը եղել է 90 րոպե: Դրանք անցկացրել են Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչները, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ, որտեղ, կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքների՝ առարկայական մասնագետների կողմից ստուգումից հետո, կատարվել է համակարգչային ստուգում:

Թեստային միավորներից գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակի:

Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
0-2	1	21-26	6
3-5	2	27-31	7
6-9	3	32-35	8
10-14	4	36-38	9
15-20	5	39-40	10

10 միավորանոց համակարգով արդյունքները տրվել են համապատասխան ուսումնական հաստատություններին, որտեղ դրանք գրանցվել են դասամատյաններում:

Արտաքին ընթացիկ գնահատման տվյալների, ինչպես նաև ուսումնական հաստատությունների տրամադրած՝ աշակերտների ընթացիկ գնահատականների հիման վրա կատարվել է արդյունքների վերլուծություն՝ մի քանի ուղղություններով.

- ընդհանուր, որտեղ ներկայացված են ՀՀ ավագ դպրոցների 11-րդ դասարանում սովորողների շրջանում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպման և անցկացման մեխանիզմները, գնահատման ընդհանուր արդյունքները և համեմատությունը նույն աշակերտների՝ նախորդ ուսումնական տարվա տարեկան գնահատականների և հոկտեմբերին անցկացված արտաքին գնահատման արդյունքների հետ,
- առարկայական, որտեղ ներկայացված է «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների թեստերի և թեստային առաջադրանքների որակական վերլուծությունները,
- ըստ մարզերի, որտեղ ներկայացված են մարզերի ավագ դպրոցների արտաքին գնահատման արդյունքները և աշակերտների առաջադիմության դինամիկան:

ների հետևյալ խումբը. հայերեն ընթերցանություն, վայելչագրություն, քերականություն, ռուսերեն ընթերցանություն, վայելչագրություն և քերականություն, ճարտասանություն, թվաբանություն, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, երաժշտություն, կրոնի պատմություն, քրիստոնեական վարդապետություն: Հետագա տարիներին՝ մինչև 1860-ական թվականների վերջը, թվարկված առարկաներից բացի դասավանդվում են լատիներեն և ֆրանսերեն, ազգային պատմություն, իսկ ավելի ուշ նաև բնական պատմություն ու գծագրություն:

Այսպիսով, ժամանակի ընթացքում Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում կրոնական-սխոլաստիկական խիստ միակողմանի ուսուցումը աստիճանաբար իր դիրքերը զիջում էր ավելի ժամանակակից ու կենսական կրթության: Ժառանգավորաց դպրոցի ուսման տևողության մասին ստուգապես ոչինչ ասել հնարավոր չէ, քանի որ որևէ հաստատուն սահմանված ուսման տևողություն գոյություն չի ունեցել: Դպրոցում, մանավանդ սկզբնական շրջանում, դեռ զգալի չափով պահպանվում և կիրառվում էին միջնադարյան դպրոցի համար բնորոշ կարգապահություն, պատժի միջոցներ ու ձևեր՝ չոքացնել, անճաշ թողնել, դալար ճիպոտով ծեծել և այլն: Սակայն ժամանակի առաջավոր, հումանիստական մանկավարժական գաղափարները աստիճանաբար թափանցում են նաև այստեղ: 1848թ. դպրոցի վերատեսուչ Շահխաթունյանցը հայտնում է Ներսես կաթողիկոսին, որ համաձայն կաթողիկոսի տված հրահանգի, դպրոցում վերացված է մարմնական պատիժը: Ժառանգավորաց դպրոցը երկար ժամանակ է իր գոյությունը պահպանել. այն փակվել է Գևորգյան Ճեմարանի հիմնումից 8 տարի հետո՝ 1882 թվականին:

մանկավարժներից պետք է հիշատակել Կայսերական ճեմարան ավարտած, առաջին կարգի բժիշկ Կ. Վասակյանին, Մոսկվայի Լազարյան ճեմարանն ավարտածներ Կ.Շահնազարյանին և Միքայել Պատկանյանին, կարճ ժամանակով դասավանդել է նաև Մոսկվայի համալսարանն ավարտած Հ.Արզանյանը և ուրիշներ: 1832-1834 թթ. այստեղ ուսուցչություն է արել նաև Մեսրոպ Թադիադյանը, որը դասավանդում էր քերականություն և ճարտասանություն:

Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում սովորում էին հոգևոր կոչման և հոգևոր ծագման անձինք: Դպրոցի կանոնադրության համաձայն՝ նպատակը հայ հոգևորականների մանուկների կրթությունն էր: Բայց, ինչպես երևում է Սինոդի 1845թ. սեպտեմբերի 28-ի օրագրությունից, երբեմն, հավանաբար բացառության կարգով, ընդունվում էին նաև սահմանափակ թվով աշխարհական ծագման աշակերտներ, որպես երթևեկներ, առանց օթևանի և սնունդի: Առհասարակ ժառանգավորաց դպրոցի աշակերտները բաժանվում էին երկու կարգի. ա) որդեգիրներ, որոնք ամբողջովին գտնվում էին վանքի խնամքի տակ, ստանալով ոչ միայն ուսում, այլ նաև օթևան, սնունդ և հագուստ, և բ) երթևեկներ, որոնք միայն սովորում էին դպրոցում, առանց ապրուստի միջոցների:

Ժառանգավորաց դպրոցի սովորողների հավաքագրման տերիտորիայի շրջանակներն անհամեմատ ավելի ընդարձակ էին, այն սպասարկում էր բոլոր հայաբնակ վայրերը: Սրանով պիտի բացատրել այն, որ ժառանգավորաց դպրոցը սակավ էր դիմում հարկադրման, վարչական միջոցների՝ աշակերտների պահանջվող թիվն ապահովելու նպատակով. շատ ավելի հաճախ, ընդհակառակը, նա որոշ պատնեշներ, արգելքներ է դրել դպրոցում սովորել ցանկացողների բավական խիստ ընտրություն:

Սկզբնական շրջանում բավական երկար ժամանակ, ուրիշ շատ ուսումնական հաստատությունների պես, ժառանգավորաց դպրոցը չի ունեցել խստորեն սահմանված ուսման ծրագիր: Մյուս հայկական հոգևոր ուսումնարանների նման, ժառանգավորաց դպրոցի ներքին կյանքը, աշխատանքը, ուսման բովանդակությունը համեմատաբար կայուն կերպարանք է ստանում 1836թ. «Կանոնադրության» հրապարակումից հետո: 1830-ական թվականների վերջերին և 40-ականների սկզբներին ժառանգավորաց դպրոցում դասավանդվում էր ուսումնական առարկա-

2. Վիճակագրական տվյալներ հանրակրթական հաստատությունների 11-րդ դասարանում սովորողների բաշխման վերաբերյալ


Ստորև ներկայացվում են ՀՀ հանրակրթական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների ընդհանուր թիվը և ավագ դպրոցում սովորող աշակերտների թիվն ըստ մարզերի:

Մարզը	ՀՀ բոլոր հանրակրթական հաստատությունների 11-րդ դասարանում սովորողների թիվը	Ավագ դպրոցի 11-րդ դասարանում սովորողների	
		թիվը	տոկոսը
Երևան	6057	5252	86,7
Շիրակ	3087	466	15,1
Լոռի	2510	472	18,8
Արագածոտն	1695	338	19,9
Արարատ	3047	421	13,8
Սյունիք	1506	544	36,1
Գեղարքունիք	2964	656	22,1
Արմավիր	3002	781	26,0
Տավուշ	1910	418	21,9
Վայոց Ձոր	1014	207	20,4
Կոտայք	2671	1333	49,9
Ընդամենը	29463	10888	382

Հանրակրթական հաստատությունների 2011-2012 ուստարվա 11-րդ դասարանի 29463 աշակերտներից 10888-ը (37%) սովորում են ավագ դպրոցներում:

3. Վիճակագրական տվյալներ արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերաբերյալ

3.1. Աշակերտների մասնակցությունը ընթացիկ գնահատմանը



Ամենավերջին ներկայությունը՝ 86%, գրանցվել է Լոռու մարզում՝ մաթեմատիկայի գրավոր աշխատանքին:

Ընդհանուր բացակայությունը «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի գրավոր աշխատանքից 7,7 % է, մաթեմատիկայից՝ 8,3 %:

3.2. Ընթացիկ գնահատման հիստոգրամներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են 2011թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ավագ դպրոցների 11-րդ դասարանների արտաքին ընթացիկ գնահատման, նույն դպրոցների 2010-2011 ուստարվա 10-րդ դասարանի տարեկան գնահատման և 2010-ի հոկտեմբերին 10-րդ դասարանի արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների բաշխման հիստոգրամները 10 միավորանոց սանդղակով:

Էջմիածնի ժառանգավորաց դպրոց

Էջմիածնի ժառանգավորաց դպրոց, որպես կանոն, ընդունվում էին հոգևոր ծագման երեխաներ, որոնք պատրաստվում էին դառնալու ինչպես կուսակրոն, այնպես էլ ուսումնավոր եկեղեցականներ. նրանք միաժամանակ պետք է կարող լինեին նաև ուսուցչություն անելու: Ուսումնարանի ներքին կարգուկանոնը, կառավարման եղանակը, վերատեսչի, ուսուցիչների, սովորողների անելիքները, պարտականություններն ու իրավունքները, ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը, ձևերն ու եղանակները կարգավորելու նպատակով քննարկվող ժամանակաշրջանում մշակվում, հաստատվում և կիրառվում են ժառանգավորաց ուսումնարանի մի քանի կանոնադրություններ:



Ինչպես այդ ժամանակի բոլոր հայկական, այնպես էլ ժառանգավորաց դպրոցի համար ամենադժվար լուծելի հարցը ուսուցչական կազմի խնդիրն էր: Պարսկական տիրապետության տարիներին և Ռուսաստանին միանալուց հետո բավականին տարիներ Էջմիածնի հոգևոր դպրոցում կամավոր կամ հարկադրանքով ուսուցչություն էին անում Աթոռի միաբանության քիչ թե շատ գրագետ անդամները: Սակայն իրենց բարձր կոչմանն անհամապատասխան ու անարժան ուսուցիչների ու դաստիարակների կողքին, քանի գնում, այնքան ավելի է մեծանում իր ժամանակի համար բավականաչափ պատրաստված, հմուտ ու արժանի մանկավարժների թիվը, որոնց լավագույն մասը իր կրթությունը ստացել էր Ռուսաստանում: Այդ

ները՝ սկսած ընտանիքից, վերջացրած մշակութի օջախներով և ամենակարևորը՝ հեռուստատեսությամբ: Դպրոցից հետո դիտվող անկումը պայմանավորված է արժեքային համակարգը կարգավորող պատասխանատու օղակի բացակայությամբ, պատկան մարմինների անհետևողականությամբ և մեր իսկ հանդուրժողականությամբ: Հուսանք, որ առաջիկայում այս և այլ բազում խնդիրներ կստանան իրենց լուծումը և բարեփոխումները կրթական ոլորտում հանրության կողմից կընկալվեն որպես այդպիսին և կլինեն շարունակական:



Գրականություն

1. Ս. Խրիմյան, Ա. Հովսեփյան, Մ. Մելքոնյան և ուրիշներ. «Դպրոցի ղեկավարում և կառավարում», ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, Երևան, 2004

2011թ. 11-րդ դասարանի արտաքին գնահատում




2010թ. 10-րդ դասարանի արտաքին գնահատում



Եթե 10-րդ դասարանի արտաքին գնահատման հիստոգրամները միջինից շեղված են դեպի ձախ, իսկ միջին միավորը (հայոց լեզվի և հայ

գրականության միջինը՝ 4,23, մաթեմատիկայինը՝ 3,99) ստանդարտ միջինից (5-ից) փոքր է, ապա 11-րդ դասարանում աշակերտները առաջադիմել են: Հայոց լեզվի և հայ գրականության հիստորիան նկարագրող կորը մոտ է նորմալ կորին, միջին միավորը (5.0-ն)՝ ստանդարտ միջինին, իսկ մաթեմատիկայի հիստորիան նկարագրող կորը մոտեցել է շեղված նորմալ կորից, միջինը՝ 4.5:

2011թ. 10-րդ դասարանի ներքին գնահատում



Ներքին գնահատման հիստորիաներում 10 միավորանոց սանդղակի փոխարեն կիրառվել են 3-ից 10 գնահատականները, ինչը պայանավորված է կրթական քաղաքականությամբ:

Տվյալների բազա մուտքագրվել են 9637 աշակերտների «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների, ինչպես նաև 9652 աշակերտների «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաների տարեկան գնահատականները, իսկ հիստորիաները կազմվել են համապատասխան գույգ առարկաներից աշակերտների ունեցած միջին գնահատականների հիման վրա: Արդյունքը՝ հայոց լեզվի և հայ գրականության 4-9 գնահատականները բաշխված են համաչափ, 3 գնահատական ստացել է 10 աշակերտ, 3,5՝ 18 աշակերտ, 9,5՝ 19 աշակերտ, 10՝ 8 աշակերտ: Մաթեմատիկայի գնահատականներից գերիշխողը 4-ն է (1672 աշակերտ), 4,5-9,5 գնահատականները բաշխված են համաչափորեն, 3 գնահատական ստացել է 10 աշակերտ, 3,5՝ 35 աշակերտ, 9,5՝ 10 աշակերտ, 10՝ 8 աշակերտ:

7. Ավագ դպրոց հաճախող, սակայն **արվեստի և սպորտի** բնագավառներում հետազայում ուսումը շարունակողների համար շատ անորոշություններ կան և եթե օբյեկտիվ լինենք, կարող ենք ասել, որ նրանք պարզապես չեն կարող ավարտել միջնակարգ դպրոցը:

8. Այսօրվա դպրոցի՝ հատկապես ավագ, **տնային հանձնարարությունների** ծավալը գերազանցում է միջակ կարողություններով աշակերտի դասապատրաստման ժամանակամիջոցը, և դա վտանգում է երեխաների առողջությունը կամ էլ նվազեցնում վերջիններիս ուսումնաստենչությունը:

9. Ուսուցիչների **վերապատրաստումները չեն ամփոփվում** նրանց վարած դասերի դիտարկումներով, և, որպես կանոն, այդ ուղղությամբ թույլ է վերահսկողությունը:

10. Ավագ դպրոցի ուսուցչի թափուր տեղի մրցույթում անգամ տարիների աշխատանքային փորձ ունեցող **շատ ուսուցիչներ չեն հաղթահարում** միասնական քննություն հանձնող դիմորդների համար նախատեսված թեստի լրացման 90%-ի շեմը: Բարձրորակ ուսուցչի կարիքը զգացնել է տալիս հատկապես ավագ դպրոցում:

Կրթության որակի բարձրացման համար, կարծում եմ, ժամանակն է ստեղծել վարկանիշային դպրոցի սանդղակներ և տարածել բարձր վարկանիշ ունեցող դպրոցների փորձը:

Այսօր դպրոցում իրականացվող փոփոխությունների համատեքստում հասարակական լայն քննարկման առարկա է դարձել դեռահասների, ինչպես նաև մեծահասակների, արժեքային համակարգի անբավարար, ազգային նկարագրից հեռու գործելակերպը: Հավանաբար ոչ մի երկրում սեր այբուբենի և մայրենի լեզվի հանդեպ, պաշտպանմունքի հասնող հայրենասիրություն այնպես չի քարոզվում, որքան Հայաստանում: Հայ գրականության և պատմության դասերը լի են մեր ժողովրդի առաքինության, բարոյականության, պատվախնդրության թեմաներով: Դպրոցներում այդ ամենին գումարվում են բազում միջոցառումներ, որոնք հաճախ հիացնում են իրենց բարոյադաստիարակչական ասելիքով: Այս առումով դպրոցին հասցեագրված մեղադրանքները՝ դաստիարակչական աշխատանքները անբավարար կազմակերպելու մասին, տեղին չեն և, կարծում եմ, արժեքային համակարգի անկմանը նպաստում են դպրոցից դուրս «գործնական դաստիարակություն իրականացնող» հաստատություն-

գիտակցում է իր դերը կրթօջախում փոփոխությունների հաջող իրականացման գործում:

Ուսուցիչ-մասնախմբի ղեկավար-փոխտնօրեն-օժանդակ մանկավարժական աշխատողներ-տնօրեն շրթայում բոլորը պետք է հստակ պատկերացնեն հաստատության գործողությունների նպատակներն ու ակնկալվող արդյունքները, նպաստեն դրանց իրականացմանը և առաջացած դժվարությունները հաղթահարեն համատեղ:

Ցանկացած փոփոխություն ընթանում է կանգառներով, որի ժամանակ հետադարձ հայացք է զգվում անցած ճանապարհին և գործընթացներին, արվում են վերլուծություններ և սխալների շտկումից հետո միայն անցնում են կատարում փոփոխությունների հաջորդ փուլին: Կարելի է պնդել, որ **ախտորոշիչ վերահսկողության նպատակ ունեցող դիտարկումներից** և իրավիճակին տրված գնահատականով է պայմանավորված բարեփոխման հետագա հաջողությունը: Վերջինիս պետք է նպաստեն կրթության գործընթացի բոլոր մասնակիցները՝ ծնողը, աշակերտը, ուսուցիչը, տնօրենը և այլն, դրանց առնչվող քննարկումներն ընթանան ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան:

Ներկայացնում մի քանի դիտարկումներ, որոնք չեն նպաստում կրթության որակի բարելավմանը.

1. Ոչ մի կերպ չի ապահովվում դասագրքերի **մատչելիությունը**, թեև այդ ուղղությամբ անընդհատ աշխատանքներ են կատարվում:
2. Դասագրքերի մեծագույն մասը **գերբեռնված են** գաղափարներով, հասկացություններով, անհարկի գիտելիքների այնպիսի պաշարով, որոնք ոչ միայն **չեն համապատասխանում** երեխաների տարիքային խմբին, այլև չեն բխում **նրանց կարիքներից**:
3. Լուրջ **բեռնաթափման կարիք ունեն առարկայական ծրագրերը**:
4. Չկան այլընտրանքային դասագրքեր:
5. Ուսուցման մեթոդները և հնարքները հնարավոր տարբերակներով պետք է ներկայացվեն ուսուցիչների մեթոդական ձեռնարկներում և **մեթոդների կիրառումը** ուսուցչի քահաճույքի հարց չպետք է լինի:

6. Ավագ դպրոցի դասագրքերը կազմված են «ընդհանուր և բնագիտական հոսքի» և «հումանիտար հոսքի» սովորողների համար: Դրանք շատ հաճախ **մեխանիկորեն են տարբերվում** (պայմանավորված ժամերի քանակով) և, ըստ էության, նոր դասագրքեր չեն կազմվել:

Միավորների բաշխման բնութագրիչները

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը) ¹	Չափման ստանդարտ սխալը ²
Հայոց լեզու և հայ գրականություն	9637	5.04	1.24	0.57
Մաթեմատիկա	9652	4.4	1.26	0.47

Բոլոր բնութագրիչները գտնվում են ընդունված ստանդարտների սահմաններում:

3.3. Ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքները

Առարկան / հոսքը	Մասնակիցների թիվը	Ստավերային գնահատումը	Նվազագույն գնահատականը	Միջին գնահատումը	1 – 3 գնահատականներ		4 – 5 գնահատականներ		6 – 8 գնահատականներ		9 – 10 գնահատականներ	
					միտողմ	տոնիստ	միտողմ	տոնիստ	միտողմ	տոնիստ	միտողմ	տոնիստ
Հայոց լեզու և հայ գրականություն												
Արհեստագործական	29	6	2	3,6	14	48,3	14	48,3	1	3,4		
Բնագիտական	1324	8	1	4,9	156	11,8	766	57,9	402	30,4		
Ընդհանուր	866	8	1	4,1	260	30,0	507	58,5	99	11,4		
Հումանիտար	3699	8	1	5,1	297	8,0	2017	54,5	1385	37,4		
Տնտեսագիտական	1659	9	1	5,4	102	6,1	734	44,2	819	49,4	4	0,2
Ֆիզմաթ	460	8	1	4,8	68	14,8	252	54,8	140	30,4		
Չնշված	1600	9	1	5,2	153	9,6	782	48,9	663	41,4	2	0,1
Ընդամենը	9637	9	1	5,0	1050	10,9	5072	52,6	3509	36,4	6	0,1

² 10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:
³ Միավորների չափման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:

Առարկան / հոսքը	Մասնակիցների թիվը	Առավելագույն գնահատականը	Նվազագույն գնահատականը	Միջին գնահատականը	1 – 3 գնահատականներ		4 – 5 գնահատականներ		6 – 8 գնահատականներ		9 – 10 գնահատականներ	
					միտում	տոկոս	միտում	տոկոս	միտում	տոկոս	միտում	տոկոս
Մաթեմատիկա												
Արհեստագործական	33	5	2	3,6	16	48,5	17	51,5				
Բնագիտական	1326	8	1	4,7	182	13,7	845	63,7	299	22,5		
Ընդհանուր	875	7	1	3,9	352	40,2	434	49,6	89	10,2		
Հումանիտար	3684	9	1	4,0	1117	30,3	2227	60,5	338	9,2	2	0,1
Տնտեսագիտական	1677	9	1	5,2	127	7,6	849	50,6	692	41,3	9	0,5
Ֆիզմաթ	474	9	1	5,1	45	9,5	250	52,7	175	36,9	4	0,8
Զնշված	1583	10	1	4,6	341	21,5	866	54,7	373	23,6	3	0,2
Ընդամենը	9652	10	1	4.4	2180	22,6	5488	56,9	1966	20,4	18	0,2

Գնահատականների մեծ տոկոսը (հայոց լեզու և հայ գրականություն՝ 52,6%, մաթեմատիկա՝ 56,9%) բաշխված է 4-5 գնահատականների միջև, մինչդեռ 9-10 գնահատական ստացել է 10-րդ դասարանի աշակերտների 0,1-0,2 տոկոսը: «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի գնահատականների դրական շեմը չի հաղթահարել աշակերտների 10,9%-ը, մաթեմատիկայինը՝ 22,6%-ը:

Հայոց լեզվի և հայ գրականության գրավոր աշխատանքի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել 10 գնահատականի շեմը, առավելագույն գնահատականը եղել է 9-ը, որի շեմը հաղթահարել է վեց մասնակից, իսկ մաթեմատիկայի առավելագույն գնահատականը եղել է 10-ը, որի շեմը հաղթահարել է մեկ աշակերտ, 9 գնահատականի շեմը հաղթահարել է 17 աշակերտ:

նպաստի բարեփոխումներին: Ունենք ևս մեկ խնդիր, երբ վերևների բարի ցանկությունը և ներքևների հավատով մոտեցումը շատ հաճախ բախվում են գործընթացի առարկայական, այդ թվում նաև ֆինանսական կողմին, և իրականում բարեփոխումները դառնում են անգամ մտահոգիչ:

Հայտնի է կրթական հաստատություններում փոփոխություններ իրականացնելու 12 սկզբունք, որոնք դեռևս անցյալ դարավերջին մշակել են արևմտյան երկրների գիտական շրջանակները [1]: Որպես կանոն՝ այդ սկզբունքները թույլ են տալիս կանխատեսել իրականացվող փոփոխությունների հնարավոր հետևանքները:

Ներկայացնենք այդ սկզբունքներից մի քանիսը, որոնք, կարծում ենք, կրթության որակի բարձրացման համար կարևոր են Հայաստանի կրթական փոփոխությունների ծիրում:

ա. Փոփոխությունը գործընթաց է և ոչ թե միջոցառում:

Փաստ է, որ հանրակրթության ոլորտում փոփոխությունները միանգամից չեն ընկալվում, որովհետև արդյունքը երևում է բավականին ուշ, երբեմն պահանջվում է տարիների աշխատանք և անպայման համապատասխան օժանդակություն: Այս սկզբունքի հաջողության համար առաջնահերթությունը պետք է տալ միաժամանակ բոլոր մակարդակներում հին գործելակերպից ձերբազատվելուն և նորովի աշխատելուն: Մասնավորաբար, որակի բարելավման համար անհրաժեշտ է կիրառել նոր ներգործուն մեթոդներ և տեխնոլոգիաներ:

բ. Կազմակերպչական փոփոխությունները պայմանավորված են անհատների գործունեով:


Տնօրենները պետք է կիրառեն տարբեր հմտություններ և մոտեցումներ՝ դպրոցի ուսուցիչներին որպես անհատներ ընկալելու և նրանց փոփոխությունների դաշտ բերելու համար: Այս պարագայում որակի բարելավմանը, անշուշտ, կնպաստի բարձր վարկանիշ ունեցող դպրոցին տարբեր ձևերով օժանդակելն ու խրախուսելը, որն էլ իր հերթին կխթանի դրական փոփոխությունների ամրապնդմանը:

գ. Փոփոխությունները հեշտ է իրականացնել թիմային աշխատանքով:

Եթե ուզում ենք ունենալ ժամանակակից դպրոց և դիմագրավել ժամանակի մարտահրավերներին, խիստ անհրաժեշտություն է դպրոցում թիմային աշխատանքը, որտեղ թիմի յուրաքանչյուր անդամ հստակ

4. Արտաքին ընթացիկ գնահատման և ներքին գնահատման արդյունքների համեմատություն

4.1. Սովորողների միջին միավորների դինամիկան



Արտաքին գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ 11-րդ դասարանում աշակերտների առաջադիմությունը բարձրացել է 10-րդ դասարանի համեմատությամբ. հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 0,8-ով, մաթեմատիկայինը՝ 0,5 –ով:

Ներքին գնահատման արդյունքները, ինչպես և սպասվում էր, ավելի բարձր են: Ի տարբերություն նախորդ տարիների ընթացիկ գնահատումների, որտեղ արտաքին և ներքին գնահատումների միավորների տարբերությունը 2 միավորից բարձր էր, ներկա ընթացիկ արտաքին և ներքին գնահատումների միջին միավորների տարբերությունը կազմում է 1,1-1,2 միավոր:

Նորայր ԽՐԻՄՅԱՆ

Երևանի Լեոյի անվան թիվ 65


ավագ դպրոցի տնօրեն

Կրթական բարեփոխումները շարունակական գործընթաց են


Մեր երկիրը թևակոխել է անկախության երրորդ տասնամյակը: Մենք ապրում ենք տնտեսական և սոցիալական արմատապես նոր միջավայրում, որը թելադրում է նոր կրթական պայմաններ:

Այսօր առաջնահերթ խնդիր է կրթության որակի բարելավումը: Իրատես լինելով՝ պետք է նշել, որ, մասնավորաբար հանրակրթության բնագավառում, մեծ ծավալի գործեր են կատարվել: Խորհրդային դպրոցից անցում ենք կատարում ազգային դպրոցի՝ միաժամանակ հետամուտ լինելով համաշխարհային գործընթացներին: Սակայն հանրակրթությունը, լինելով իներտ համակարգ, հնարավորություն չի տալիս կատարվող փոփոխությունների արդյունքներին ակնատես լինել միանգամից: Խնդիր է նաև այն, որ հանրության զգալի մաս կազմող կրթության ոլորտի մասնագետները (ուսուցիչներ, տնօրեններ, դասախոսներ և այլն) իրենք են հաճախ հակադրվում այդ փոփոխություններին: Վերջին տասնամյակի նորությունները դեռևս ինչպես հարկն է չեն «մարսվել» հենց ուսուցչության կողմից: Իսկ առանց գործի հանդեպ եղած հաջողության հասնելու **հավատի** գործընթացը չի

4.2. 11-րդ դասարանի արտաքին ընթացիկ գնահատման և ներքին գնահատման արդյունքների հարաբերակցությունը



«Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի արտաքին գնահատման ընթացքում սովորողների 7.3%-ը հավաքել է իր տարեկան գնահատականներից 1.5 և ավելի միավորներ, 48.8%-ը՝ տարեկան գնահատականներից 1.5 և պակաս միավորներ, իսկ տարեկան 8-9 գնահատական ստացած 42 աշակերտ չի հաղթահարել դրական միավորների շեմը: Տարեկան 10 գնահատական ունեցող աշակերտները արտաքին գնահատումից հավաքել են 4-8 միավոր:



«Մաթեմատիկա» առարկայի արտաքին գնահատման ընթացքում սովորողների 3%-ը հավաքել է իր տարեկան գնահատականներից 1.5 և ավելի միավորներ, 56%-ը՝ տարեկան գնահատականներից 1.5 և պակաս միավորներ, իսկ տարեկան 8-9 գնահատական ստացած 117 աշակերտ չի հաղթահարել դրական միավորների շեմը: Տարեկան 10 գնահատական ունեցող 15 աշակերտներից տասը հավաքել են 4-6 միավոր, մյուսները՝ 7-10 միավոր:

մշտապես աշխատի բարձրացնել իր որակը, ինչն էլ կդառնա նրա աշխատանքի հաջողության գրավականը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Ա. Կրուտեցկի, Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, «Լույս», 1976:
2. Ս. Ս. Լևիտինա, Կարելի՞ է արդյոք կառավարել դպրոցականի ուշադրությունը, Երևան, «Լույս», 1982:
3. Լ. Խ. Նովիկովա, Գպրոցը և միջավայրը, Երևան, «Լույս», 1986:
4. Մ. Բադալյան, Իսահակ Հարությունյանը դաստիարակության մի քանի հարցերի մասին, Երևան, «Լույս», 1975:

դրսևորումներ չեն լինում: Հնարավոր ենթադրություններից մեկն այն է, որ դպրոցական առօրյա պրակտիկայում չեն ապահովվում այնպիսի հոգեբանական պայմաններ, ինչպիսիք առկա են փորձարարական ուսուցման ժամանակ:

Ընդհանրապես միջին և բարձր դասարանների աշակերտների վրա շատ դրական ազդեցություն է ունենում երաժշտական-երգային միջավայրը, ձայնագրությունների ունկնդրումը, երեխաները գործարար մթնոլորտից փոխադրվում են լիրիկական մթնոլորտ: Երաժշտություն կարելի ունկնդրել դասամիջոցներին [3]:

Երաժշտության ներքո կարելի է իրականացնել նաև համակարգչային դասարանում անցկացվող գրեթե բոլոր դասերը: Հարկավոր է երեխաներին սովորեցնել հուզականորեն ընկալել շրջակա միջավայրը, տեսնել նրա առանձնահատկությունները, նկատել նրանում տեղի ունեցող փոփոխությունները: Դրանում կարող են շատ օգնել հատուկ ընտրված ձայնագրությունները:

Մյուս հարցը, որ կարևորում ենք, ուսուցչի կողմից իր աշակերտներին հնարավորինս լավ ճանաչելու հարցն է, ինչը ուսուցչին ավելի մեծ հնարավորություն կտա անհատական մոտեցում ցուցաբերելու նրանցից յուրաքանչյուրի հանդեպ:

Աշակերտներին տարբեր առումներով ճանաչելու նպատակով, կարելի է կիրառել այդ նպատակով ստեղծված թեստեր, սակայն ցանկալի է, որ դա անի դպրոցի հոգեբանը:

Նոր դասարանի աշակերտներին ճանաչելու համար կարելի է օգտագործել Ջ. Սաքսի «Անավարտ նախադասությունների թեստը», որում առաջարկվում են 60 անավարտ նախադասություններ (այդ նախադասությունները անգլերենի դասերին աշակերտներին տրվում են որպես վարժություն): Թեստի պահանջը՝ կարդացեք յուրաքանչյուր նախադասությունը և լրացրեք՝ գրելով այն, ինչ անմիջապես հայտնվում է ձեր գլխում: Աշխատեք նախադասություններն ավարտել հնարավորին չափով արագ: Ահա այդ նախադասություններից որոշ օրինակներ.

Ես միշտ ցանկացել եմ...

Դպրոցում իմ ուսուցիչները...

Իմ բացակայությամբ իմ ընկերները...


Ես կցանկանայի այլևս չվախենալ...

Ամփոփելով նշենք, որ ուսուցչի լավագույն մանկավարժական և հոգեբանական որակները հիմնականում ձևավորվում ու զարգանում են գործնական աշխատանքում, մանկավարժական փորձի ձեռք բերման գործընթացում: Բայց դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է, որ ուսուցիչը


5. Արտաքին գնահատման արդյունքներն ըստ մարզերի

5.1. Սովորողների բաշխվածությունն ըստ հոսքերի

Ստորև ներկայացվում է ՀՀ ավագ դպրոցների 11-րդ դասարանում սովորողների բաշխվածությունն ըստ հոսքերի:



5.2. Արտաքին գնահատման արդյունքներն ըստ մարզերի



Ընդհանուր առմամբ հայոց լեզվի և հայ գրականության ամենաբարձր միջին միավորը (5,4) հավաքել են տնտեսագիտական հոսքի, ամենացածր (3,5)՝ արհեստագործական հոսքի սովորողները, բայց քանի որ վերջինների թիվը շատ փոքր է եղել (22 աշակերտ), կարելի է համարել, որ ամենացածր միջին միավորը (4,1) հավաքել են ընդհանուր հոսքի սովորողները: Հայոց լեզվի և հայ գրականության ամենաբարձր միջին միավորը՝ 6,3, հավաքել են Արագածոտնի տնտեսագիտական, այնուհետև Կոտայքի տնտեսագիտական (միջին միավորը՝ 6,0) հոսքերի սովորողները: Բոլոր մարզերում ամենացածր արդյունքներով հանդես են եկել ընդհանուր հոսքի աշակերտները:

ստեղծագործական մտածողություն ձևավորելու օրինաչափությունները, աշակերտների հոգեկան աշխարհում կատարվող այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ուսուցման և դաստիարակության ազդեցությամբ:

Տարիքային հոգեբանությունն ուսումնասիրում է երեխաների հոգեբանական զարգացման ընդհանուր օրինաչափությունները, հոգեկան զարգացման փուլերը, յուրաքանչյուր տարիքի երեխաների հոգեբանական և անհատական առանձնահատկությունները:

Թե՛ մանկավարժական հոգեբանությունը, թե՛ տարիքային հոգեբանությունը հիմնվում են ընդհանուր հոգեբանության վրա, որը բացահայտում է ընդհանուր հոգեբանական օրինաչափությունները, ուսումնասիրում է արդեն ձևավորված անձնավորության հոգեկան պրոցեսները, հոգեկան վիճակները և անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

Իհարկե, ոչ տարիքային հոգեբանությունը, ոչ էլ մանկավարժական հոգեբանությունը չեն առաջարկում որոշակի միջոցներ և չեն տալիս հանձնարարականներ մանկավարժական գործընթացի կառուցման համար, բայց անհրաժեշտ է, որ նրանց հետազոտություններն ու հետևություններն օգտագործվեն ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ կազմակերպման համար:

Շատ կարևոր է աշակերտների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելը: Տարբեր տարիքի երեխաների նկատմամբ ուսուցիչը պետք է ցուցաբերի տարբեր վերաբերմունք: Այսպես օրինակ՝ համարվում է, որ դեռահաս երեխային ուսուցանելն ու դաստիարակելն ավելի դժվար է, քան կրտսեր և ավագ տարիքի երեխաներին:

Անդրադառնանք ևս երկու հարցի, որոնք, կարծում ենք, կարող են կիրառվել ուսուցչի կողմից իր աշխատանքային գործունեության մեջ:

Առաջինը ուսումնական գործընթացում երաժշտության կիրառման հարցն է:

Հաշվի առնելով միջին դասարանների աշակերտների դեռահասային տարիքին բնորոշ ճգնաժամը, որն ավելի է դժվարացնում ուսուցիչների աշխատանքը նրանց ուղղորդելու, նրանց ուշադրությունը դասի վրա կենտրոնացնելու, նրանց վարքը կարգավորելու ուղղությամբ՝ կարելի է յոթերորդ և ութերորդ դասարաններում մեկական դաս անցկացնել դասական երաժշտության ներքո: Նման փորձ արդեն կատարվել է: Դասական երաժշտությունը հանգստացրել է աշակերտներին և ակտիվացրել նրանց ուշադրության և ընկալման մեխանիզմները, բարձրացել է նրանց աշխատունակությունը: Մենք այն կարծիքին ենք, որ փորձարարական ուսուցման պայմաններում երեխաներն ընդունակ են հրաշքներ գործել, նրանց հնարավորությունները կարծես գործնականում դառնում են անսահմանափակ, մինչդեռ սովորական դպրոցական պայմաններում նման

Ուսուցչի հաղորդակցական ընդունակության լավագույն ապացույցը մանկավարժական տակտի դրսևորումն է: Մանկավարժական տակտի պայմաններից մեկը չափի զգացման պահպանումն է յուրաքանչյուր մանկավարժական ներգործության (խրախուսանքի, հորդորի, պատժի) դեպքում: Տակտով ուսուցիչը ուշադիր ու զգայուն է երեխաների հանդեպ, հաշվի է նստում նրանց անհատական, հոգեբանական առանձնահատկությունների հետ:

Ուսուցիչը պետք է ունենա նաև մի շարք դրական անձնական որակներ՝ նպատակաուղղվածություն, հաստատակամություն, աշխատասիրություն, համեստություն և այլն: Նա դաստիարակում է նաև անձնական օրինակով, իր սեփական վարքով: Բոլոր այդ հատկությունների մեջ առանձին տեղ է գրավում ինքնազայումը՝ իրեն տիրապետելը, իր զգացումները, տրամադրությունը, ապրումները, ժամանակավոր բարդ հոգեվիճակներում իրեն կառավարելու կարողությունը,

Ուսուցչի աշխատանքը տեխնիկական առումով բաղկացած է երեք մասից՝ նախապատրաստական (դասից առաջ), դասարանական (դասի ընթացքում) և վերլուծական (դասից հետո): Սրանից հետևում է, որ ուսուցիչը պետք է տարատեսակ վերլուծություններ կատարի հաջորդ դասերին ավելի լավ պատրաստված ներկայանալու համար:


Ուսուցիչը կարող է ունենալ, այսպես կոչված, «ինքնավերլուծության օրագիր», որում անընդհատ նշումներ կատարի դասի ժամանակ թույլ տված սխալների, բացթողումների վերաբերյալ, որպեսզի դրանք շտկի և չկրկնի հաջորդ դասերին:

Հոգեբանական տեսանկյունից մշտապես կատարվող ինքնավերլուծությունը կօգնի հաջորդ դասերին հոգեբանորեն ճիշտ նախապատրաստվելուն:

3. Սովորողի զարգացման և տարիքային հոգեբանության առանձնահատկությունները

Ստորև կխոսենք մեր հանրակրթության համար սոցիալ-հոգեբանական առումով առանցքային, խիստ արդիական մանկավարժական հոգեբանության և տարիքային հոգեբանության մասին:


Մանկավարժական հոգեբանությունը, որն ուսումնասիրում է երեխաների և երիտասարդության գործունեության ու վարքի կոնկրետ ձևերը դպրոցում և այլ ուսումնադաստիարակչական հիմնարկներում, դպրոցում աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետման օրինաչափությունները, հետազոտում է նրանց անհատական տարբերություններն ու աշակերտների մեջ ակտիվ, ինքնուրույն,



Ընդհանուր առմամբ մաթեմատիկայի ամենաբարձր միջին միավոր (5,3) ունեցել են տնայնակարգային հոսքի, ամենացածր միջին միավոր (3,8)՝ ընդհանուր հոսքի սովորողները:

Մաթեմատիկայի ամենաբարձր միջին միավորը՝ 6,4, հավաքել են Սյունիքի ֆիզմաթ, այնուհետև Կոտայքի տնտեսագիտական (միջին միավորը՝ 5,9) և ֆիզմաթ (միջին միավորը՝ 5,6) հոսքերի սովորողները: Բոլոր մարզերում ամենացածր միջին միավոր հավաքել են ընդհանուր հոսքի սովորողները:

5.3. Արտաքին և ներքին գնահատման արդյունքներն ըստ մարզերի



Այդ ամբողջության բաղադրիչներից է դիդակտիկական ընդունակությունը [1], որը աշակերտներին ուսումնական նյութը պարզ ու հասկանալի հաղորդելու, այն մատչելի դարձնելու, առարկայի հանդեպ հետաքրքրություն առաջացնելու, սովորողների ինքնուրույն մտածողությունը զարգացնելու ընդունակությունն է: Դիդակտիկական ընդունակություններով օժտված ուսուցիչը կարողանում է, անհրաժեշտության դեպքում, համապատասխան ձևով վերակառուցել, հարմարեցնել ուսումնական նյութը, դժվարը դարձնել հեշտ, բարդը՝ պարզ, անորոշն ու անհասկանալին՝ հասկանալի:

Վարպետ ուսուցչին ներկայացվող պահանջներից է նաև դպրոցականի ուշադրությունը կառավարելու կարողությունը [2]: Ուսումնական նոր նյութը մատուցելիս նա առաջին հերթին պիտի հող նախապատրաստի աշակերտների կողմից դրա յուրացման համար, նրանց որոշ ժամանակ տա հանգստից ու թուլացումից անցնելու աշխատանքային վիճակի, մոբիլիզացնի նրանց ուշադրությունը:

Հարկ է նշել, որ ուսուցիչը ուսումնական գործընթացում հիմնականում աշխատում է ամբողջ դասարանի ուշադրությունը իր խոսքի վրա կենտրոնացնելու, զգալիորեն ավելի հազվադեպ՝ յուրաքանչյուր աշակերտի ուշադրությունը կենտրոնացնելու ուղղությամբ:

Դասի ընթացքում աշակերտների ուշադրությունը վարպետ ուսուցիչը կենտրոնացնում է հատուկ հնարներ կիրառելով և ուսումնական գործընթացն այնպես կազմակերպելով, որ դեռահասը ո՛չ ժամանակ, ո՛չ ցանկություն, ո՛չ էլ հնարավորություն ունենա երկար ժամանակ շեղվելու դասից: Հետաքրքիր գործը, հետաքրքիր դասը կարող են այնպես կլանել դեռահասին, որ նա բավական երկար ժամանակ հաճույքով աշխատի, իսկ որպեսզի դասապրոցեսը լինի ավելի հետաքրքիր և արդյունավետ, յուրաքանչյուր ուսուցիչ կարող է մտածել ու ստեղծել սեփական, յուրօրինակ ձևերն ու մեթոդները՝ կիրառելով համապատասխան դիդակտիկ նյութեր: Կարծում ենք, որ ուսուցիչը դասապրոցեսի մեծ մասը պետք է հատկացնի գործնական աշխատանքներին, աշակերտների կողմից թեստային առաջադրանքների կատարմանը, երկխոսություններին:

Բացի վերը նշվածից, ուսուցիչը պետք է օժտված լինի ակադեմիական, խոսքային, կազմակերպական, ավտորիտար, ինչպես նաև ըմբռնողական (պերցեպտիվ) ընդունակություններով: Վերջինս աշակերտի ներքին աշխարհը թափանցելու ընդունակությունն է, հոգեբանական դիտունակությունը՝ աշակերտի անձնավորության և նրա ժամանակավոր հոգեբանական վիճակների իմացությունը: Ընդունակ ուսուցիչը, դաստիարակը ամենաչնչին նշաններից, աննշան արտաքին դրսևորումներից անգամ պետք է կարողանա որսալ աշակերտի ներքին վիճակի ամենավոր փոփոխությունները:

Ուսուցչի հիմնական առաքելությունը այնպիսի պայմանների ստեղծումն է, որ աշակերտները՝ ապագա քաղաքացիները, կարողանան սկսել սեփական «ուղևորությունը»՝ անցնելու իրենց և իրենց շրջապատը հասկանալու դժվարին ճանապարհը:

Այս հողվածում կփորձեք հնարավորինս շարադրել ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ՝ անձնական և մասնագիտական, որոնց կատարումը, կարծում ենք, մեծապես կնպաստի դասարանում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, ուսուցման արդյունավետության և սովորողների կրթական մակարդակի բարձրացմանը:



2. Վարպետ ուսուցչին բնորոշ հոգեբանամանկավարժական որակներ


Ուսուցիչը դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական կազմակերպիչն է: Պատանու, աղջկա հանրակրթական պատրաստվածության և դաստիարակվածության անհրաժեշտ մակարդակն ապահովվում են ոչ միայն դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, դրանց բովանդակությունը, այլև ուսուցչի մասնագիտական և քաղաքացիական որակները:

Մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության ուղղությամբ կատարվող աշխատանքը ուսուցչից պահանջում է ինչպես կազմակերպչական որակներ, որոշակի հմտություններ և ունակություններ, այնպես էլ մի շարք հոգեբանական առանձնահատկություններ, որ վերաբերում են մանկավարժական ընդունակությունների կատեգորիային:

Ուսումնադաստիարակչական հաջող աշխատանքի ամենանհրաժեշտ նախադրյալը հանդիսանում է ուսուցչի սերը երեխաների ու իր աշխատանքի նկատմամբ, մեծ ցանկությունը աշխատելու և շփվելու մանկական կոլեկտիվի հետ:

Երեխաների հանդեպ ուսուցչի սերն արտահայտվում է նրանց նկատմամբ ուշադիր, բարյացակամ և նրբազգաց վերաբերմունքի մեջ, երեխաների հետ վարվելու պարզության ու անկեղծության մեջ, մանուկների հետ մանկավարժական շփումից ստացած խոր բավարարվածության, նրանց յուրահատուկ աշխարհը թափանցելու հնարավորության զգացումի մեջ: Այսինքն՝ լավ ուսուցիչը պետք է օժտված լինի մանկավարժական ընդունակություններով, որոնք բնութագրում են անձի ինչպես մտավոր, այնպես էլ հուզական-կամային կողմը: Բոլոր այդ որակները սերտ կապված են մեկը մյուսի հետ, ազդում են միմյանց վրա ու կազմում մեկ միասնական ամբողջություն:






Ալիսա ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Սյունիքի Վաղատինի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Վարպետ ուսուցչին բնորոշ հոգեբանամանկավարժական որակներ: Սովորողի տարիքային հոգեբանության կարևորությունը

1. Ներածություն



Ժամանակակից կրթության պահանջներով արդյունավետ ուսուցում և դաստիարակություն իրականացնելու համար ուսուցիչը պետք է ունենա պետական մասնագիտական որակավորման չափանիշներին համապատասխան ընդհանուր կրթական, մասնագիտական մեթոդական պատրաստվածություն, ինչպես նաև նեղ մասնագիտական գիտելիքներ և ունակություններ: Սակայն որակյալ ուսուցիչ լինելու կարևորագույն պայմաններից մեկն էլ նրա հոգեբան լինելն է:

Ուսուցիչը ոչ միայն պետք է համապատասխան գիտելիքներ ունենա, իմանա և հմտորեն կիրառի դասապրոցեսի կազմակերպման ձևերը, այլև հանդիսանա ազգային գաղափարախոսության կրողն ու ջատագովը, լինի դրանով պայմանավորված կրթական քաղաքականությունն իրագործող անձնավորություն՝ վարվելակերպով ու աշխարհայացքով, մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով, հասարակական կյանքի կատարելագործման գործընթացներին ակտիվ մասնակցությամբ:



- ժամանակագրական-կառուցվածքային՝ ըստ փաստաթղթերի ստեղծման ժամանակագրական հաջորդականության վերլուծությունը:

Վերլուծությունը, դրա հետ միասին նաև հետազոտությունը, ավարտվում է եզրակացություններով և առաջարկություններով: Հարցման արդյունքում արված եզրակացությունները դիտարկվող երևույթին վերաբերող կանխատեսումների հիմք են հանդիսանում: Պետք է հստակեցնել՝ որքանով են լուծված հետազոտության առջև դրված խնդիրները, որ խնդիրներն են լուծված և որոնք՝ ոչ, վերանայել լուծմանը խոչընդոտող պատճառները: Անհրաժեշտ է ցույց տալ, թե հետազոտության շնորհիվ ուսումնասիրվող խնդրի տեսության և գործնականում խնդրի լուծման մեջ ինչ ներդրում է կատարվել և ձևակերպել ուսումնասիրվող սոցիալական գործընթացների կառավարմանն ուղղված հանձնարարականներ:



Ստացված տեղեկությունների մշակումը

Հետազոտության եզրափակիչ փուլը արդյունքների վերլուծությունն է: Դա որոշակի խնդիրների լուծման նպատակով փաստաթղթային աղբյուրներից սոցիոլոգիական տեղեկատվության կորզման մեթոդների և ընթացակարգերի հանրագումարն է:


Գոյություն ունի փաստաթղթերի ուսումնասիրման երկու մեթոդ՝ ավանդական և պաշտոնական: Իր հերթին, պաշտոնական վերլուծությունը կարող է ներկայացվել երեք տարատեսակներով՝ բովանդակային վերլուծություն (կոնտենտ անալիզ), վիճակագրական տեղեկությունների վերլուծություն և տեքստային տեղեկությունների տեղեկատվական-նպատակային վերլուծություն:

Այս մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Ավանդական վերլուծությունը հենվում է տեքստի ընկալման վրա: Այս մեթոդի առավելությունը իր պարզության մեջ է: Ավանդական վերլուծությունը կախված է փաստաթղթի ուղղվածությունից, հետազոտության պայմաններից, նպատակներից և խնդիրներից, ինչպես նաև հետազոտողի գիտական որակավորումից, փորձառությունից ու ստեղծագործական մտքից: Վերլուծության այս տեսակը չի բացառում հետազոտողի կողմից սուբյեկտիվ գնահատումը և մեկնաբանությունները: Սուբյեկտիվությունից ձերբազատվելու նպատակով մշակվել է փաստաթղթերի պաշտոնական վերլուծության մեկ այլ տեսակ՝ բովանդակային (կոնտենտ) վերլուծությունը: Այն իրենից ներկայացնում է տեքստային փաստաթղթերի բովանդակության մշակում և գնահատում: Այսպիսի վերլուծության օբյեկտ կարող են հանդիսանալ տեքստ պարունակող բոլոր տեսակի փաստաթղթային աղբյուրները: Այս մեթոդիկան կիրառվում է տեքստային մեծ զանգվածների առկայության և հստակ կառուցվածքի դեպքում:


Բովանդակային վերլուծությունն ընդգրկում է՝

- խորհրդանիշների և հիմնաբառերի հաշվումը,
- դրանց դասակարգումը ըստ բևեռացվածության (օրինակ՝ դրական / բացասական),
- փաստաթղթերի վերլուծությունը ըստ հիերարխիայի (առանձնացվում են տեքստի գլխավոր և երկրորդական մասերը),
- թեմատիկ վերլուծությունը՝ ակնհայտ և թաքնված թեմաների բացահայտումը,
- կառուցվածքային-թեմատիկ՝ միմյանց փոխընդհանուր գանազան թեմատիկ նյութերի հարաբերակցության վերլուծությունը,

Շիրակի մարզ



Սյունիքի մարզ



○ Բարդ և նուրբ հարցերը պետք է տեղադրել հարցաթերթիկի վերջին մասում:

○ Դասակարգումային տեղեկատվության հարցերը նույնպես պետք է տեղադրել հարցաթերթիկի վերջնամասում: Տիպային հարցաթերթիկն ունենում է հիմնական և դասակարգումային տեղեկություններ: Հիմնական տեղեկությունները վերաբերում են հետազոտության առարկային: Դասակարգումային տիպը թույլ է տալիս դասակարգել հացվողներին: Վերջիններիս ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրիչները հաճախ օգտագործվում են որպես դասակարգման փոփոխականներ:

6. Հարցաթերթիկի ֆիզիկական հատկանիշների որոշումը:

Հարցաթերթիկի ֆիզիկական պարամետրերը կարող են ազդել ստացված պատասխանների ճշգրտության վրա: Հարցաթերթիկի ֆիզիկական ձևաչափը որոշելիս պետք է հաշվի առնել հետևյալ պահերը:

○ Հարցաթերթիկի արտաքին գրավչության ապահովում:



Հարցաթերթիկը չպետք է պատճենահանված լինի, և պետք է տպագրված լինի որակյալ թղթի վրա:

○ Հարցման անցկացման հեշտացում:

Հարցաթերթիկը պետք է ունենա օպտիմալ չափեր և հարցերի օպտիմալ հաջորդականություն: Համառոտ հարցաթերթիկ լրացնելը հեշտ է, ժամանակատար չէ, իսկ հարցումից հարցվողի հրաժարվելու հավանականությունը քիչ է: Չանգվածային հարցումների դեպքում տեսակավորման, հաշվման և տեղեկությունների խմբավորման համար դրանք հարմար են և թեթև: Հարցերի համարակալումը հեշտացնում է կողավորումը, խմբագրումը և աղյուսակների կիրառումը:

7. 1-7-րդ փուլերի վերստուգումը և անհրաժեշտության դեպքում դրանց ճշգրտումը: Այս փուլում ամբողջ հարցաթերթիկը վերստուգվում է, և վերացվում են չնկատված թերությունները:

8. Հարցաթերթիկի նախնական թեստավորումը և անհրաժեշտության դեպքում ճշգրտումը: Այս փուլում բացահայտվում են այն հարցերը, որոնց ձևակերպումները կամ հաջորդականությունը կարելի է փոխել: Հաճախ փոքր խմբի հետ (10 հոգին բավական է) անցկացնում են փորձարկում: Դա պետք է անել հիմնական հարցման միջավայրին համանման միջավայրում՝ նախապես համապատասխան հրահանգներ տալով հարցվողներին: Փորձարկման արդյունքներով ի հայտ եկած թերություններն ու անճշտությունները վերացվում են: Եթե փոփոխությունները շատ ակնառու են, հարցաթերթիկը պետք է նորից ստուգել:




Արտաքին և ներքին գնահատման արդյունքները համընկնում կամ համարյա համընկնում են Արագածոտնի մարզի տնտեսագիտական, Արարատի մարզի հումանիտար (հայոց լեզվից և հայ գրականությունից),

Երևանի ընդհանուր, Լոռու մարզի բոլոր, Կոտայքի մարզի ընդհանուր և տնտեսագիտական (մաթեմատիկայից) հոսքերում:

10-րդ և 11-րդ դասարանների արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր մարզերում վերոնշյալ երկու առարկաներից գրանցվել է աճ: Բացառություն է կազմում Վայոց Ձորի մարզը, որտեղ 11-րդ դասարանի մաթեմատիկայի միջին միավորները նկատելի ցածր են 10-րդ դասարանի միջիններից:

5.4. Վերլուծություն ըստ սեռերի



Ավագ դպրոցների բոլոր հոսքերում աղջիկների միջին միավորները նկատելի բարձր են տղաների միջին միավորներից:

6. Արտաքին գնահատման արդյունքներն ըստ դպրոցների

Ստորև ներկայացվում են «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից ավագ դպրոցների սովորողների միջին միավորները: Դիագրամում դպրոցները ներկայացված են ըստ հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորների աճման կարգի:

○ Ուղղորդող հարցեր: Հարցի ձևակերպումն ուղղորդում է, թե ինչ պատասխան կարելի է տալ:

○ Թաքնված այլընտրանքներ: Հարցը պարունակում է պատասխանի այլընտրանք: Օրինակ՝ «Կցանկանայի՞ք ուսումը շարունակել բուհում, թե՞ կնախընտրեիք լինել տնային տնտեսուհի»: Այս հարցը ճիշտ կլինի ձևակերպել այսպես՝ «Կցանկանայի՞ք ուսումը շարունակել բուհում, եթե դա հնարավոր լիներ»:

○ Թաքնված ենթադրություններ: Հարցի ոչ ճիշտ ձևակերպման պատճառով տարբեր մարդիկ կարող են տարբեր պատասխաններ տալ: Օրինակ՝ «Պե՞տք է արդյոք օրենք ընդունել, որպեսզի աշակերտները դպրոցական համազգեստ կրեն, թե՞ պետք է կիրառել պատժամիջոցներ»:

○ Ընդհանրացումներ և գնահատականներ: Հարցերը միշտ պետք է ձևակերպվեն ոչ թե ընդհանուր, այլ կոնկրետ տերմիններով: Հարցվողը չպետք է ստիպված լինի, օրինակ, կատարել ինչ-որ հաշվարկներ, հետո պատասխանել:

○ Կրկնակի հարցեր: Այս հարցերը պահանջում են երկու պատասխան: Օրինակ՝ «Ինչպե՞ս եք գնահատում N ոչ պետական դպրոցի ուսման որակը և վարձավճարները»: Այս հարցի դեպքում հարցվողը կարող է ունենալ միմյանց հակասող երկու պատասխան: Նման հարցերը պետք է վերածել երկու հարցի:

5. Հարցերի հերթականության որոշումը: Հերթականության որոշման խիստ որոշակի կարգ գոյություն չունի, սակայն առաջարկվում է հետևել հետևյալ սկզբունքներին:

○ Հարցաթերթիկի սկզբում տեղադրել պարզ և հետաքրքիր հարցեր: Եթե հարցվողը դժվարանա պատասխանել կամ դրանք համարի անհետաքրքիր կամ վտանգավոր, կարող է հրաժարվել հարցումից: Պարզ և հետաքրքիր հարցերը, նույնիսկ եթե չեն վերլուծվելու, թուլացնում են լարվածությունը և նպաստում հարցվողի հետ կոնտակտի ամրապնդմանը:

○ Օգտվել «թունելային» կամ «ձագարածև» մոտեցումից՝ սկսել ընդհանուր հարցերից, ապա աստիճանաբար անցնել ավելի նեղ թեմատիկայի հարցերին: Հարցերի հաջորդականության մեջ պետք է պահպանել յուրաքանչյուր հաջորդին անցնելու տրամաբանականությունը: Երբեմն, անցումն ավելի սահուն դարձնելու համար, այն դեպքում, երբ փոխվում է թեմատիկան, կարելի է օգտագործել գտող հարցեր կամ տալ համառոտ բացատրություն:

○ Օգտագործել ճյուղավորված հարցեր: Մրանք ավելի շատ օգտագործվում են բանավոր հարցումների ժամանակ: Օրինակ՝ «Դուք օգտվո՞ւմ եք համակարգչից» հարցի բացասական պատասխանի դեպքում հարցվողը բաց է թողնում դրանից բխող մի շարք հարցեր:

Օրինակ՝

«Ի՞նչ ես մտածում ձեր դպրոցի մասին: Որքանո՞վ ես համաձայն հետևյալ պնդումներին»:

Նշի՛ր մեկ շրջանակ յուրաքանչյուր տողում



	Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Մասամբ համաձայն չեմ	Ամենևին համաձայն չեմ
ա) Ես սիրում եմ լինել դպրոցում	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>
բ) Ես ապահով եմ զգում դպրոցում	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>
գ) Ես ինձ դպրոցի մաս եմ զգում	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>	<input type="radio"/>

Վերևում նշված հարցի հնարավոր պատասխաններն են՝ «լիովին համաձայն եմ», «մասամբ համաձայն եմ», «մասամբ համաձայն չեմ», «ամենևին համաձայն չեմ»: Այս սխեմայի առավելությունը նրանում է, որ պատասխանները էջի վրա դասավորվում են դրանց համար նախատեսված մակերեսի վերին մասում, իսկ տարատեսակները՝ ձախ կողմում: Լրացման ձևի վերաբերյալ ցուցումները սովորաբար տրվում են մեկ անգամ՝ ամենակարգում: Այս կերպ կարճ ժամանակամիջոցում հնարավորինս շատ տեղեկություններ են կորզվում:

4. Հարցերի ձևակերպման որոշումը: Ոչ ճիշտ ձևակերպումը կարող է հանգեցնել հարցմանը մասնակցելու համաձայնություն տված հարցվողների ընդլվածմանը և հարցումից հրաժարվելուն կամ միտումնավոր և ոչ կոռեկտ պատասխաններ տալուն (ճիշտ չհասկանալու պատճառով): Ուստի պետք է խուսափել հետևյալ պահերից:

- Պատասխան չունենալու վիճակ: Հարցվողը համաձայնում է մասնակցել հարցմանը, բայց հրաժարվում է կամ չի կարող պատասխանել հարցերի մի մասին:
- Բարդ հասկացություններ: Քանի որ հետազոտողները հարցվողներից սովորաբար ավելի կրթված են լինում, երբեմն դժվարանում են հարցվող կոնտինգենտին հասկանալի չափով պարզեցնել բառերը կամ արտահայտությունները:
- Կասկածելի բառեր և հարցեր: Դրանք չպետք է լինեն երկիմաստ: Օրինակ, «երբեմն» պատասխանը կարող է ոչ միանշանակ ընկալվել: Նախընտրելի է հարցվողին հետևյալ կերպ տալ ընտրության հնարավորություն.

- երբեք չեմ օգտվում,
- օգտվում եմ մոտավորապես ամիսը մեկ անգամ,
- օգտվում եմ մոտավորապես շաբաթը մեկ անգամ,
- օգտվում եմ գրեթե ամեն օր:





Արտաքին գնահատմանը մասնակցած 88 ավագ դպրոցներից 78-ի հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորն ավելի բարձր է, քան մաթեմատիկայինը:

Հայոց լեզվից և հայ գրականությունից ավագ դպրոցների միջին միավորների առավելագույն տարբերությունը 2.6 միավոր է, մաթեմատիկայից՝ 2,7:

Միջին հաշվով հայոց լեզվից և հայ գրականությունից դրական միավորների շեմը չեն հաղթահարել 4 դպրոցի, մաթեմատիկայից՝ 23 դպրոցի աշակերտները:

Ստորև ներկայացվում են վերոնշյալ երկու առարկաներից ավագ դպրոցների միջին միավորներն ըստ հոսքերի:



Դա կախված է հարցերի և դրանց ձևակերպումների ճիշտ ընտրությունից, հարցվողների կողմից պատասխանները ձևակերպելու կարողությունից և տվյալ թեմատիկայի նկատմամբ նրանց զգայունությունից: Հարցվողները կարող են չպատասխանել նաև, եթե հարցը զայրացնի կամ վախեցնի նրանց: Հարցի կարևորությունից ելնելով, եթե հնարավոր չէ հանել այդպիսի հարցը, ապա պետք է ուշադրություն դարձնել դրա ձևակերպման և տեղադրման վրա: Ըստ էության, նուրբ հարցերը պետք է տեղադրել, որքան հնարավոր է, հարցաթերթիկի վերջին հատվածում՝ կիրառելով հետևյալ միջոցները.

- ա) հարցը տեղադրել ավելի չեզոք հարցերի խմբում,
- բ) հարցը ձևակերպել այնպես, որ այն նորմալ ընկալվի:

Օրինակ՝ «Հետազոտությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր N-րդ աշակերտ ուսումնական տարվա ավարտին բախվում է դժկամությամբ դպրոց հաճախելու խնդրի հետ»: Մեղմացնող այսպիսի ձևակերպման կիրառումը հեշտացնում է հարցվողի կողմից հնարավոր շփոթության հաղթահարումը:



գ) Ուշադրություն դարձնել ուրիշների գործունեության և զգացողությունների վերաբերյալ հարցերի ձևակերպմանը: Օրինակ՝ «Ձեր կարծիքով, աշակերտներից շատերը օգտվո՞ւմ են ծածկաթերթիկներից: Ինչպե՞ս»: Հարցի նման ձևակերպման դեպքում կարելի է համոզված լինել, որ հարցվողները շատ ավելի անկեղծ կպատասխանեն, քան, եթե նրանց ուղիղ հարցնեին՝ օգտվո՞ւմ են ծածկաթերթիկներից և ինչպե՞ս:


դ) Պատասխանի ձևակերպումը դնել մի շարք կատեգորիաների տեսքով, որոնցից մեկը հարցվողը կընտրի որպես պատասխան: Օրինակ, տարիքի մասին հարցնելու փոխարեն կարելի է տեղադրել տարիքային կատեգորիաներ՝ 20-29, 30-39, 40-49, 50-59, 60 և ավելի:

3. Պատասխանների ձևի որոշումը: Երբ արդեն որոշված է յուրաքանչյուր հարցի բովանդակությունը, անհրաժեշտ է որոշել, թե ինչ տեսակի հարցեր պետք է լինեն հարցաթերթիկում: Գործնականում կիրառվում են հարցերի հետևյալ տեսակները:

- Ազատ պատասխանով հարցեր: Առաջարկվող պատասխանի բացակայության դեպքում հարցվողը պատասխանում է իր բառերով:
- Բազմապատասխան հարցեր: Սրանք պատասխանների սահմանափակ քանակով հարցեր են, որոնցից հարցվողը կարող է ընտրել իր դիրքորոշմանը առավել համապատասխանողը: Օրինակ, այդպիսին են տարիքին վերաբերող հարցերը:
- Դիխոտոմիկ հարցեր: Սրանք երկու հնարավոր պատասխան ունեցող հարցեր են: Օրինակ՝ «այո» և «ոչ»:
- Սանդղակներ: Ֆիքսված պատասխաններով հարցեր են, որոնցում պատասխանը ցույց տալու համար կիրառում են որոշակի սանդղակ:

- Անհրաժեշտ է արդյոք մեկի փոխարեն մի քանի հարցեր գետեղել:
Այն դեպքում, երբ նույն հարցին պատասխանելիս հարցվողը կարող է տալ մի քանի հիմնավորում, ավելի լավ է տվյալ հարցը բաժանել մասերի: Օրինակ՝ «Ինչո՞ւ եք կարդում գեղարվեստական գրքեր» հարցին մի հարցվողը կարող է պատասխանել՝ «Որպեսզի հարստացնեմ բառապաշարս», մեկ ուրիշը՝ «Խորհուրդ է տվել ուսուցիչը»: Այդ պատճառով հարցը պետք է բաժանել պատասխանի հնարավոր ուղղություններն արտահայտող երկու մասերի: Օրինակ՝ «Առաջին անգամ ինչո՞ւ եք գեղարվեստական գիրք կարդացել» և «Ո՞րն է հիմնական պատճառը, որ Դուք գեղարվեստական գիրք եք կարդում»:
- Տիրապետո՞ւմ է արդյոք հարցվողը պատասխանի համար անհրաժեշտ տեղեկություններին:
Անհմաստ պատասխաններից խուսափելու համար պետք է տալ այնպիսի հարցեր, որոնք հարցվողի համար իմաստ ունենան: Հարցվողը պետք է տեղեկացված լինի, թե ինչին է վերաբերում հարցումը և պետք է հիշի այդ տեղեկությունը: Օրինակ՝ «Ձեր ընտանիքը մեկ կիսամյակի ընթացքում որքա՞ն գումար է ծախսում գրեհական պիտույքներ գնելու համար» հարցի դեպքում, եթե հարցվողն ինքը չի կատարում գնումները, ապա հազիվ թե տիրապետի դրան վերաբերող տեղեկություններին: Նման դեպքերում, հիմնական հարցից առաջ, պետք է օգտագործել գտող (ֆիլտր) հարցեր: Օրինակ՝ «Ձեր ընտանիքում ո՞վ է կատարում գրեհական պիտույքների գնումները»: Եթե հարցվողը չի կատարում գնումները, ապա նա կարող է բաց թողնել այս հարցից բխող մյուս հարցերը:
- Հարցման առարկայի մասին հիմնական հարցը տալուց առաջ կարելի է օգտագործել հետևյալ բնույթի հարցեր՝ «Դուք ունե՞ք որևէ կարծիք վերաբերյալ»: Փորձը ցույց է տալիս, որ գտող հարցերի կիրառումը պատասխանների մեջ «չգիտեմ» պատասխանի բաժինը ավելացնում է 20-25%-ով: Ինչ վերաբերում է հարցվողի կողմից հարցման առարկային վերաբերող տեղեկությունները հիշելուն, ապա դա կախված է հարցման առարկայի կարևորությունից, տվյալ իրադարձությունից անցած ժամանակից, հիշելուն նպաստող շարժառիթների առկայությունից կամ բացակայությունից: Ասվածից հետևում է, որ, եթե իրադարձությունը հարցվողներից շատերի համար այնքան էլ կարևոր չէ, ապա պետք է հետաքրքրվել դրա մասին ամենաթարմ տեղեկություններով միայն: Ավելի կարևոր իրադարձությունների համար գոյություն ունեն երկու գործոններ, որոնք ազդում են կոնկրետ ժամանակահատվածի վերաբերյալ հավաստի պատասխան տալու վրա: Դրանցից մեկը չափազանցնելու սխալն է, մյուսը՝ վատ հիշողությունը:
- Ցանկություն կունենա՞ր արդյոք հարցվողը պատասխանելու տվյալ հարցին:





7. Թեստեր և թեստային առաջադրանքներ

7.1 Թեստերի կառուցվածքը և գնահատումը

Բոլոր առարկաների թեստերը բաղկացած են եղել ընտրովի, կարճ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքներից: Ընտրովի պատասխանով առաջադրանքներն ունեցել են չորսական պատասխան (դիստրակտոր):

Ընտրովի և կարճ պատասխաններով առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորով: Բացառություն են կազմել «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի 25-րդ և 29-րդ կարճ պատասխանով առաջադրանքները, որոնք գնահատվել են առավելագույնը 2 միավորով, 27-րդ և 32-րդ առաջադրանքները՝ 4 միավորով, և «Մաթեմատիկա» առարկայի 35-րդ և 36-րդ ընդարձակ պատասխանով առաջադրանքները՝ 2 միավորով:

Հարցաթերթիկների կազմման ժամանակ հաճախ թույլ են տրվում սխալներ, որոնք ներկայացված են ստորև:

- Հանդիպում են թաքնված կանխակալ պատասխան (հուշում) պարունակող հարցեր: Օրինակ՝ «Ինչո՞ւ եք նախընտրում սովորել ուսման բարձր որակ ապահովող N ուսումնական հաստատությունում» հարցի ձևակերպումը հուշում է պատասխանը:

- Հանդիպում են ավելորդ հարցեր: Պետք չէ հարցաթերթիկում գետեղել ավելորդ հարցեր: Միաժամանակ, խնդրի պարզեցումը և հարցերի թվի սահմանափակումը հնարավորություն են տալիս ստացված տվյալների մեկնաբանությունը կատարել անհրաժեշտ ուղղությամբ:

- Հանդիպում են երկիմաստ հարցեր: Օրինակ՝ «Ինչպիսի՞ն է Ձեր գնահատականը N ուսումնական հաստատության կրթության որակի և կարգապահության վերաբերյալ»: Այս դեպքում հարցվողի պատասխանը կարող է վերագրվել կա՛մ որակին, կա՛մ կարգապահությանը, ինչը բացասաբար կանդրադառնա հետազոտության արդյունքների վրա:

- Հարցերը չեն լինում բավարար չափով տարբերակիչ: Դրանք պետք է բավարարեն հուսալիության և վավերականության չափանիշներին:

Հարցերի բովանդակության որոշումը: Այս աշխատանքը մեծապես կախված է նախորդ փուլերում կատարված աշխատանքի որակից: Դրա հետ միասին անհրաժեշտ է պատասխանել մի շարք հարցերի:

- Անհրաժեշտ է արդյոք տվյալ հարցը: Եթե տվյալ խնդիրը ամբողջությամբ չի ընդգրկվում հարցերի մեջ, ապա պետք է մտցվի լրացուցիչ հարց, որը պետք է ձևակերպվել այնպես, որ ապահովվի պատասխանի՝ անհրաժեշտ չափով մանրամասն լինելը, բայց ոչ դրանից ավելին:

Օրինակ, ուսուցիչների հարցման ժամանակ ընտանիքում երեխաների առկայությունը հարցման որոշակի նպատակի դեպքում կարող է կարևոր գործոն հանդիսանալ, քանի որ դա վկայում է հարաբերություններում փոխադարձ կախվածության առկայության մասին: Դա հատկապես ակնհայտ է, երբ երեխայի տարիքը 6-ից ցածր է: Այդ տարիքային խմբի երեխաների և նրանց ծնողների, ինչպես նաև 6-17 տարեկան երեխաների և նրանց ծնողների միջև հարաբերություններում պատասխանատվության աստիճանը միանգամայն տարբեր է: Սոցիոլոգիայում հայտնի «կենսական ցիկլի փուլեր» հասկացությունը որպես փոփոխական գործոն օգտագործելու դեպքում անհրաժեշտություն չի առաջանում իմանալու յուրաքանչյուր երեխայի տարիքը, բավական է ընդամենը մեկ հարց տալ ընտանիքի ամենափոքր երեխայի տարիքի մասին:

պատասխան ունեցող (դիխոտոմիկ) և պատասխանների սանդղակով հարցերը: Օրինակ, պատասխանների սանդղակով է՝ «Որքա՞ն հաճախ եք դիտում ուսումնական ֆիլմեր» հարցը, որի համար առաջարկված են՝ «երբեք», «հազվադեպ», «երբեմն», «հաճախ» պատասխանները: Փակ հարցերի անվիճելի առավելությունը պատասխանների միօրինակությունն է, ինչը թույլ է տալիս հեշտությամբ մշակել տվյալները: Այսպիսի հարցերի թերություններն են պատասխանի մոտավորությունը, անհրաժեշտ պատասխանի բացակայությունը և ոչ այնքան ճշգրիտ մեկնաբանությունը:

Կիսափակ հարցերի դեպքում հարցի տվյալ տեսակի ձևակերպման սահմաններում, առաջարկվող պատասխանների տարբերակների հետ միասին, հարցվողին հնարավորություն է տրվում ներկայացնելու պատասխանի սեփական տարբերակը: Նման դեպքերում տրվում է ցուցում, օրինակ՝ «Եթե ներկայացված պատասխանների մեջ չկա Ձեզ անհրաժեշտ տարբերակը, ներկայացրեք Ձեր սեփականը»:

Այն դեպքում, երբ հետազոտողը կանխատեսելի երևույթի ելքերի հնարավոր տարբերակների մասին միայն մոտավոր տեղեկություններ ունի և դժվարանում է ձևակերպել դրանց պատճառները, հարցաթերթիկում նախընտրելի է օգտագործել լրիվ ազատ պատասխանով բաց հարցեր: Իսկ եթե հետազոտողը տիրապետում է կանխատեսման ելքի պատճառների վերաբերյալ ընդունելի ենթադրություններին, ապա նա ինքը կարող է ձևակերպել կանխատեսումային վարկածներ: Վերջիններս հաշվետվությունների տեսքով կազմում են փորձագետի հարցաթերթիկի փաստաթղթային հիմքը:

- Հարցերը ձևակերպելիս անհրաժեշտ է հետևել հետևյալ պահանջներին.
- հարցերը պետք է հասկանալի լինեն հետազոտվող կատեգորիայի մարդկանց համար և լինեն հստակ ձևակերպված,
- չլինեն գայրացնող և նվաստացնող (ազգային, կրոնական, սոցիալական, ընտանեկան, անձնական ինքնասիրությունը վիրավորող),
- չլինեն ակնհայտ պատասխան ունեցող,
- լինեն ոչ հավաստի պատասխաններ ենթադրող,
- չլինեն խաչվող (տարբեր հարցերի պատասխանները նույնն են ստացվում),
- լինեն բովանդակալից (հնարավորինս շատ տեղեկություններ կորզող),
- լինեն հակիրճ,
- օգտագործվեն ինդիկացիոն (պատասխանների հավաստիությունը ստուգող) հարցեր,
- բացառված լինի հարցերի երկիմաստությունը,
- ունենան լրացնելու համար հարմար ձևավորում և լինեն հստակ տպագրված:

Ստորև տրված աղյուսակում ներկայացված է թեստերի կառուցվածքն ըստ առաջադրանքների տիպերի:

Առարկան	Տարբերակների քանակը	Թեստերի կառուցվածքը						Թեստի առավելագույն միավորը
		Ընտրովի պատասխանով առաջադրանքներ		Կարճ պատասխանով առաջադրանքներ		Ընդարձակ պատասխանով առաջադրանքներ		
		քանակը	առավելագույն միավորը	քանակը	առավելագույն միավորը	քանակը	առավելագույն միավորը	
Մաթեմատիկա	4	27	27	7	7	4	6	40
Հայոց լեզու և հայ գրականություն	4	24	24	7	12	1	4	40

7.2. Թեստերի բարդության գործակիցը և հուսալիությունը

Առարկան	Թեստի համարը	Բարդության գործակիցը ³	Հուսալիության գործակիցը ⁴
Հայոց լեզու և հայ գրականություն	1, 3	0,51	0,79
	2, 4	0,49	0,79
Մաթեմատիկա	1, 3	0,39	0,85
	2, 4	0,38	0,87

Հայոց լեզվի և հայ գրականության թեստերն ունեն միջին բարդություն (բարդության գործակիցը՝ 0,49-0,51) և միջին հուսալիություն (0,79): Մաթեմատիկայի թեստերի բարդությունը նույնպես միջին է (բարդության գործակիցը՝ 0,38 -0,39), սակայն հուսալիության գործակիցն ավելի մեծ է (0,85-0,87): Նախորդ տարվա համեմատությամբ հայոց լեզվի և հայ գրականության թեստերի բարդության գործակիցն աճել է 0,13-0,16-ով, հուսալիության գործակիցը՝ 0,01-0,05-ով, մաթեմատիկայի թեստերի բարդության գործակիցը աճել է 0,05-ով, հուսալիության գործակիցը՝ 0,02-0,03-ով:

³ Առաջադրանքը համարվում է բարդ՝ բարդության գործակցի՝ P-ի 0,2-ից փոքր լինելու, միջին բարդության՝ $0,2 < P < 0,8$, հեշտ՝ $P \geq 0,80$ դեպքերում:

⁴ Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունված արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Ամփոփում

2011թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ 88 ավագ դպրոցների 11-րդ դասարաններում «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից անցկացվել է արտաքին ընթացիկ գնահատում, որի նպատակն է եղել հետազոտել 11-րդ դասարանում նշված առարկաներից սովորողների արդյունքները, պարզել նրանց առաջադիմության դինամիկան՝ 2010-2011 ուստարվա 10-րդ դասարանի ներքին (տարեկան) գնահատման և 2010-ի հոկտեմբերի 10-րդ դասարանի արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությամբ, ինչպես նաև ուսումնասիրել արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ ավագ դպրոցի հոսքերի:

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցել է հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 9637, մաթեմատիկայից՝ 9652 աշակերտ:

• ՀՀ ավագ դպրոցներում սովորողների ընդհանուր առաջադիմությունը

Ավագ դպրոցների 11-րդ դասարանում սովորողների միջին միավորը «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից համընկնում է ստանդարտ միջինի՝ 5-ի հետ, իսկ «Մաթեմատիկա» առարկայից (միջին միավորը 4,5)՝ շարունակում է փոքր մնալ ստանդարտ միջինից: Գնահատականների դրական շեմը չհաղթահարած աշակերտները կազմել են 10,9 տոկոս՝ հայոց լեզվից և հայ գրականությունից, 22,6 տոկոս՝ մաթեմատիկայից: Միևնույն ժամանակ 9-10 գնահատական ստացած աշակերտների տոկոսը շատ փոքր է՝ 0,1-0,2%, իսկ սովորողների մեծամասնությունը (53-57%) ստացել է 4 կամ 5 գնահատական: 10 գնահատական ստացել է մեկ աշակերտ մաթեմատիկայից, որի տարեկան գնահատականները հանրահաշվից և երկրաչափությունից նույնպես եղել են 10:

Հայոց լեզվից և հայ գրականությունից տարեկան 10 գնահատական ունեցող 23 աշակերտներից երկուսը հավաքել է 8, երկուսը՝ 7, մյուսները՝ 4-6 միավոր:

Հանրահաշվից և երկրաչափությունից տարեկան 10 գնահատական ունեցող 15 աշակերտներից տասը հավաքել են 4-6 միավոր, մյուսները՝ 7-10 միավոր:

Արտաքին գնահատման միջին միավորները նախորդ տարվա համեմատությամբ աճել են 0,5-0,8 միավորով:

ստուգելի, պարունակեն ենթադրություն, լինեն ոչ հակասական և համապատասխանեն փաստերին: Անհրաժեշտ է նաև, օգտագործելով հետազոտվող միջավայրում գործող լեզուն, առավելագույն ճշտությամբ ձևակերպել հարցերը և հնարավոր պատասխանները, որոշել ընտրանքը, ընտրել հարցման ուղին:

Հարցաթերթիկների մշակումը կատարվում է որոշակի փուլերով:

1. Հարցման բովանդակության որոշումը: Ինչպես նկարագրական, այնպես էլ պատճառահետևանքային հետազոտությունները, որոշակի վարկածներ առաջադրելու նպատակով տվյալ թեմայի վերաբերյալ որոշակի գիտելիքներ են պահանջում, որոնց հիման վրա էլ որոշվում է, թե ումից և ինչ տեղեկություններ պետք է հավաքել: Հարցաթերթիկում կարող է լինել միայն հարցվողի կենսագործունեության փաստերի (նրա գիտելիքների, քաղքացիական վիճակի, անցյալում և ներկայում նրա գործունեության և այլ թեմաների) կամ շարժառիթների, գնահատականների ու վերաբերմունքի վերաբերյալ հարցերի խումբ: Եթե անհրաժեշտություն է լինում իմանալու տեսակետի ինտենսիվությունը, սպա հարցի ձևակերպման մեջ մտցվում է գնահատման համապատասխան սանդղակ:

2. Հարցաթերթիկի և հարցերի տեսակների, ինչպես նաև հարցում անցկացնելու մեթոդի որոշումը: Հարցման բովանդակության հստակեցումից հետո անհրաժեշտ է որոշել, թե անհրաժեշտ տեղեկություններն ինչպես պետք է հավաքել: Դա վերաբերում է հարցաթերթիկի ստանդարտացմանը և թափանցիկությանը, ինչպես նաև լրացման մեթոդներին (հեռակա^o, թե^o հետազոտողի ներկայությամբ): Օրինակ, եթե հարցման ժամանակ պետք է մասնակիցներին ցույց տալ նկար, որի մասին նրանք պետք է կարծիք հայտնեն, այդ դեպքում փոստային և հեռախոսային հարցումը նպատակահարմար չէ:

Հարցերը միմյանցից տարբերվում են ըստ ձևի և գործառույթի: Ըստ ձևի հարցերը կարող են լինել բաց, փակ և կիսափակ, ըստ գործառույթի՝ հիմնական, ակնարկող, ստուգող, ճշգրտող և այլն:

Բաց հարցերը հարցվողին թույլ են տալիս պատասխանը կառուցել իր ցանկությամբ, ինչպես ըստ բովանդակության, այնպես էլ՝ ըստ ձևի (ենթադրում են ազատ պատասխան): Այսպիսի հարցերում որոշակի պատասխաններ չեն պարտադրվում, ինչը առավելություն է տալիս ավելի ամբողջական տեղեկություններ ստանալու, սակայն վերջիններիս մշակումն ու մեկնաբանումն ավելի դժվար է և ոչ միանշանակ: Դրանից բացի, այդպիսի հարցաթերթիկներ լրացնելը մեծ ժամանակ է պահանջում, ուստի նրանք քիչ են օգտագործվում:

Փակ հարցերը հիմնականում պատասխանի «այո» և «ոչ» տարբերակներ ունեցող հարցեր են: Պատասխանի որևէ տարբերակ ընտրելով՝ հարցվողը այն նշում է «V» նշանով: Հիմնականում կիրառվում են ֆիքսված երկու

Հարցումն անցկացնելուց առաջ անհրաժեշտ է հստակեցնել նպատակը: Դրան հաջորդում է նպատակային լսարանի ընտրությունը, ապա, հաջորդաբար, հարցաթերթիկի կազմումը, հարցաշարի վերատուգումը և փորձարկումը, հարցման անցկացումը և հարցման նյութերի մշակումն ու վերլուծությունը:

Հարցաթերթիկը հարցերի և դրանց հնարավոր պատասխանների հավաքածու է, որի հարցերից յուրաքանչյուրը տրամաբանորեն կապված է հետազոտության հիմնական նպատակի հետ, իսկ պատասխաններից ընտրվում են ամենանպատակահարմարները, կամ հարցվողները ներկայացնում են իրենց սեփական պատասխանները: Որպես կանոն, հարցաթերթիկը կազմված է ներածական, անձնական տվյալների մասերից և հիմնական հարցերից: Ներածական մասում համառոտ խոսվում է հետազոտությունն անցկացնողի մասին, ներկայացվում են հարցման նպատակները և հարցաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ տրվում են ցուցումներ: Վերջիններս անհրաժեշտ են հատկապես հետազոտող-հարցվող հեռակա շփման դեպքում: Անձնական տվյալների մասում հարցվողին խնդրվում է ներկայացնել իր մասին որոշ տվյալներ (օրինակ, սեռը, տարիքը, կրթությունը, աշխատավայրը, բնակության վայրը, ընտանեկան դրությունը, երեխաների թիվը և այլն): Հարցաթերթիկի վերջում հարցվողին շնորհակալություն է հայտնվում:

Փոքրածավալ հարցաթերթիկներում մի հարցին անմիջապես հաջորդում է մյուսը: Մեծածավալ հարցաթերթիկները հաճախ կարող են ունենալ ճյուղավորված կառուցվածք, այսինքն, որոշ հարցերի պատասխաններից կախված՝ հարցվողը կարող է չպատասխանել այդ հարցերին հաջորդող մի քանի հարցերին:


Հարցաթերթիկները հնարավորություն են տալիս տեղեկություններ ստանալ մարդկանց մեծ խմբերի մասին՝ հարցման ենթարկելով նրանց մի մասին միայն: Իհարկե, հավաստի արդյունքներ ստացվում են միայն այն ժամանակ, երբ մանրամասն մշակվում են հարցերը, և երբ հարցվողների ընտրությունը բավական ճշգրիտ է արտացոլում պոպուլյացիան՝ որպես ամբողջություն:

Հարցաթերթիկների կազմումը հետազոտության հիմնական վարկածների թարգմանությունն է հարցերի լեզվով: Դա բարդ և ծավալուն աշխատանք է: Հարցաթերթիկը պետք է ապահովի հարցվողի նկատմամբ արդարացի և խնդրի նկատմամբ նշանակալից բովանդակության ստացում: Որպես կանոն, գիտականորեն կարևոր հարցաթերթիկների կազմումը խմբային համատեղ աշխատանք է: Դրա համար անհրաժեշտ է որոշել հարցման նպատակը, վերլուծել հարցերը (ո՞ր հարցը ի՞նչ նպատակ է հետապնդում) և առաջադրել վարկածներ: Վերջիններս պետք է բավարարեն մի շարք պահանջների՝ լինեն

Օրինաչափ է համարվում այն, որ ներքին գնահատման արդյունքները բարձր են արտաքին գնահատման արդյունքներից: Հարկ է նշել, որ ներկա ներքին գնահատումների և ընթացիկ արտաքին միջին միավորների տարբերությունը կազմում է 1,1-1 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ տարբերություն նախորդ տարիների ընթացիկ գնահատումների, որտեղ ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը 2 միավորից բարձր է եղել:

• **Միջին միավորներն ըստ հոսքերի**

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 88 ավագ դպրոցներից 57-ն (65%) ունի բնագիտական, 35-ը (40%)՝ ընդհանուր, 73-ը (83%)՝ հումանիտար, 52-ը (59%)՝ տնտեսագիտական, 29-ը (33%)՝ ֆիզմաթ հոսք:



Պետք է նշել, որ ավագ դպրոցների մեծ մասը արհեստագործական հոսքի հնարավորություն չունի, հետևաբար արհեստագործական հոսքի համար դիմած աշակերտներն ընդգրկվել են ընդհանուր հոսքում:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ երկու առարկաներից ամենաբարձր միջին միավորներ գրանցվել են տնտեսագիտական, ամենացածրը՝ ընդհանուր հոսքում:

Ընդհանուր հոսք ունեցող դպրոցների 45%-ի հայոց լեզվի և հայ գրականության, 73%-ի մաթեմատիկայի միջին միավորները ցածր են եղել դրական միավորների շեմից: Ընդհանուր հոսքում սովորում է 914 աշակերտ, ընդ որում՝ հայոց լեզվից և հայ գրականությունից առավելագույն գնահատականը եղել է 8-ը, որի շեմը հաղթահարել է 1 աշակերտ, 7 գնահատականի շեմը հաղթահարել է 11 աշակերտ: Մաթեմատիկայից առավելագույն գնահատականը եղել է 7-ը, որի շեմը հաղթահարել է 10 աշակերտ:

Բնագիտական հոսք ունեցող դպրոցների 10%-ի հայոց լեզվի և հայ գրականության, 16%-ի մաթեմատիկայի միջին միավորները ցածր են եղել դրական միավորների շեմից: Բնագիտական հոսքում սովորում է 1378 աշակերտ, ընդ որում՝ առավելագույն գնահատականը եղել է 8-ը, որի շեմը հայոց լեզվից և հայ գրականությունից հաղթահարել է 4 աշակերտ, մաթեմատիկայից՝ 10 աշակերտ:

Հումանիտար հոսք ունեցող դպրոցների 3%-ի հայոց լեզվի և հայ գրականության, 55%-ի մաթեմատիկայի միջին միավորները ցածր են եղել դրական միավորների շեմից: Հումանիտար հոսքում սովորում է 3853 աշակերտ, ընդ որում՝ առավելագույն գնահատականը հայոց լեզվից և հայ գրականությունից եղել է 8-ը, որի շեմը հաղթահարել է 35 սովորող, մաթեմատիկայից՝ 9-ի և 8-ի շեմը հաղթահարել է 2-ական սովորող:

Տնտեսագիտական հոսք ունեցող դպրոցների 4%-ի միջին միավորները երկու առարկաներից ցածր են եղել դրական միավորների շեմից: Տնտեսագիտական հոսքում սովորում է 1731 աշակերտ, ընդ որում՝ առավելագույն գնահատականը հայոց լեզվից և հայ գրականությունից եղել է 9-ը, որի շեմը հաղթահարել է 4 սովորող, 8-ի շեմը հաղթահարել է 33 սովորող, մաթեմատիկայից՝ 9-ը և 8-ը, որոնց շեմը հաղթահարել են համապատասխանաբար 7 և 31 սովորող:

Ֆիզմաթ հոսք ունեցող դպրոցների 14%-ի հայոց լեզվի և հայ գրականության, 10%-ի մաթեմատիկայի միջին միավորները ցածր են եղել դրական միավորների շեմից: Ֆիզմաթ հոսքում սովորում է 485 աշակերտ, ընդ որում՝ առավելագույն գնահատականը հայոց լեզվից և հայ գրականությունից եղել է 8-ը, որի շեմը հաղթահարել է 1 աշակերտ, մաթեմատիկայից՝ 9-ի և 8-ի շեմը հաղթահարել է համապատասխանաբար՝ 4 և 5 աշակերտ:

- **Վերլուծություն ըստ մարզերի**

Ըստ մարզերի և տարածաշրջանների վերլուծությունը ցույց է տվել, որ մարզերի միջին միավորներից ամենամեծի և ամենափոքրի տարբերությունը երկու առարկաներից էլ փոքր է՝ 0,9: Համեմատաբար բարձր են Սյունիքի, Երևանի և համեմատաբար ցածր՝ Արմավիրի, Շիրակի մարզի ավագ դպրոցների 11-րդ դասարանների աշակերտների ցուցանիշները:

Հարցումը նախնական ինֆորմացիայի ստացման մեթոդ է, որն իրենից ներկայացնում է միասնական պլանով միավորված և փաստերի, երևույթների ու գործընթացների վերաբերյալ տեղեկությունների հավաքմանն ուղղված հարցաթերթիկների կազմում և հետազոտության անցկացում: Այն կիրառվում է հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով, մարդահամարների անցկացման ժամանակ և հասարակական գիտություններում:

Կրթության ոլորտում հարցման մեթոդի կիրառումը նպատակահարմար է աշակերտների, ուսուցիչների, ծնողների և այլ շրջանակներում զանգվածային հետազոտություններ կատարելու, քիչ ծախսատարության և հավաքված տեղեկությունների համակարգչային մշակման ու վերլուծության տեսանկյունից: Այս մեթոդի կարևոր առանձնահատկություններից է անանունությունը (ֆիքսվում են միայն հարցվողի պատասխանները):

Հարցաթերթիկների կազմումը և ընդհանրապես հարցման հետ կապված բոլոր աշխատանքներին մասնագիտական մոտեցում ցուցաբերելը կարևորագույն պայման է, որովհետև հարցաթերթիկը հետազոտության շատ նուրբ և ճկուն միջոց է, իսկ դրա կազմումը՝ հետազոտական մի բարդ գործընթաց, որը ներառում է հարցման նպատակի և հարցվող կոնտինգենտի որոշումը, վարկածների առաջադրումը, հարցման ձևի որոշումը և այլն:

Ավելի մանրամասն ծանոթանանք հարցման գործընթացի հետ:

Ցանկացած հարցման ժամանակ անհրաժեշտ է հստակ որոշել հարցման նպատակը, կատարվող ծախսերը, հարցումն անցկացնելու տեխնիկան և ձևը, հետազոտության տևողությունը, ստացվելիք տեղեկությունների հուսալիությունը և հավաստիությունը, տեղեկությունների մշակման մեթոդները և արդյունքների ներկայացման ձևը:

Հարցումը մարդկանց սուբյեկտիվ հայացքների ուսումնասիրման կարևորագույն, որոշ դեպքերում՝ միակ միջոցն է: Հարցումների հիմնական տեսակներն են՝ հարցաթերթիկային հարցումը, հարցազրույցը, փորձագիտական հարցումները, սոցիոմետրիական հարցումները, թեստավորումը: Ըստ հարցվողների թվի հարցումը լինում է անհատական (մեկ հարցվող), խմբային (մի քանի հարցվողներ), լսարանային (անցկացվում է միաժամանակ և միևնույն սենյակում հավաքված մարդկանց հետ) և զանգվածային (100-1000 հարցվող), ըստ ընդգրկման ամբողջականության՝ համատարած (ընտրանքի բոլոր ներկայացուցիչների հարցում) և ընտրանքային (ընտրանքի մի մասի հարցում), իսկ ըստ հարցվողի հետ շփման տիպի՝ դեմ առ դեմ (հետազոտողի ներկայությամբ) և հեռակա (հետազոտողը բացակայում է): Վերջին դեպքում հարցաթերթիկը հարցվողին ուղարկվում է փոստով կամ հրապարակվում է մամուլում, համացանցում, բաժանվում և հավաքվում է ըստ բնակության վայրի, աշխատավայրի և այլն:


Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ հետազոտությունների և վերլուծությունների բաժնի առաջատար մասնագետ

Հարցումը և կրթության որակի բարելավումը

Կրթության որակը ուսումնառության պայմանների բարդ համակարգ է, որի չափման համար բավական չեն նույնիսկ ամենամանրակրկիտ և հավաստի սոցիոլոգիական ցուցանիշները: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերջիններիս և մարդկանց պահանջների համապատասխանության սուբյեկտիվ գնահատականները: Ըստ էության, կրթության որակը մարդու ուսումնառության պայմանների օբյեկտիվ և սուբյեկտիվ բնութագիրն է, որը կախված է կրթության նկատմամբ մարդու պահանջմունքներից և ուսումնառության վերաբերյալ նրա ունեցած սուբյեկտիվ պատկերացումներից ու գնահատականներից: Փորձից, մշակութային հարստությունից, արժեքային նախընտրանքներից կախված՝ կրթության որակի որոշ բաղադրիչներ կարող են ավելի շատ կարևորվել մարդու գիտակցության մեջ, որոշ բաղադրիչներ՝ ավելի պակաս, մյուսները, հնարավոր է, ընդհանրապես չկարևորվեն: Սուբյեկտիվ գնահատականները կարևոր են նրանով, որ կարող են տարբերակվել ըստ տարածաշրջանների, սոցիալական և ժողովրդագրական խմբերի և թույլ են տալիս պատկերացում կազմել հասարակության կրթական պահանջարկների մասին:

Քանի որ կրթության և ուսումնառության գործընթացները խմբային բնույթ են կրում, դրանց հետազոտման համար հաճախ օգտվում են զանգվածային հարցումների մեթոդից, որը կարող է լինել բանավոր (հարցազրույց) և գրավոր (հարցաթերթիկների միջոցով):



11-րդ դասարանների արտաքին ընթացիկ գնահատման, նույն դպրոցների նախորդ ուստարվա 10-րդ դասարանի տարեկան գնահատման և 10-րդ դասարանի արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները փաստում են, որ՝

- արտաքին և ներքին գնահատման արդյունքները համընկնում կամ համարյա համընկնում են Արագածոտնի մարզի տնտեսագիտական, Արարատի մարզի հումանիտար (հայոց լեզվից և հայ գրականությունից) Երևանի ընդհանուր, Լոռու մարզի բոլոր, Կոտայքի մարզի ընդհանուր և տնտեսագիտական (մաթեմատիկայից) հոսքերում,
- բոլոր մարզերում վերոնշյալ երկու առարկաներից գրանցվել է առաջադիմության աճ: Բացառություն է կազմում Վայոց Ձորի մարզը, որտեղ 11-րդ դասարանի մաթեմատիկայի միջին միավորները նկատելի ցածր են եղել 10-րդ դասարանի միջիններից: Ըստ մարզերի և տարածաշրջանների արդյունքները ուղարկվել են

կրթության մարզային վարչություններին, ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ կառուցողական քննարկումների անցկացման, կրթության որակի, կրթության կազմակերպական աշխատանքների բարելավման ռազմավարական ծրագրերի մշակման նպատակով:

• Թեստեր և թեստային առաջադրանքներ

Բազմակողմանի և հանգամանալից վերլուծության են ենթարկվել 11-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների ընթացիկ գնահատման թեստերը, ընդհանուր առմամբ՝ 4 թեստ և 140 թեստային առաջադրանք: Թեստերը,

բովանդակային առումով, կազմվել են 10-րդ դասարանի առարկայական ծրագրերի շրջանակներում: Դրանք իրենց որակական բնութագրիչներով (բարդություն, տարբերակում, կորելյացիա, հուսալիություն) համապատասխանում են ընդունված ստանդարտներին, ընդ որում՝ թեստերի բարդության և հուսալիության գործակիցները մեծացել են նախորդ տարվա արտաքին գնահատման արդյունքների համեմատությամբ:

Վերլուծությունը ներկայացվել է առարկայական մասնագետներին, որոնք դրա հիման վրա կատարել են թեստերի բովանդակային վերլուծություն:

ԳԹԿ հետազոտությունների և վերլուծությունների բաժին՝

- Արտակ Մարտիրոսյան - բաժնի պետ
- Նարինե Բայաթյան – գլխավոր մասնագետ
- Լուսինե Հակոբյան – առաջատար մասնագետ
- Շուշան Նիկողոսյան – առաջատար մասնագետ
- Ալինա Մարգարյան – առաջատար մասնագետ
- Սոնա Կարախանյան առաջին կարգի մասնագետ

Թեստային առաջադրանքները ո՛չ հարցեր են, ո՛չ խնդիրներ, այլ պնդումներ են, որոք, կախված թեստավորվողների պատասխաններից, կարող են վերափոխվել ճշմարիտ կամ սխալ ասույթների:¹ Մանկավարժական թեստեր մշակելիս պետք է հավատարիմ մնալ այս պնդմանը:

Առավել խիստ պահանջներ ներկայացվում են թեստի լեզվին. այն պետք է հասկանալի լինի փորձարկվողներին, պետք է լինի տպավորիչ ու լակոնիկ:

Այսպիսով, մանկավարժական թեստերի մշակման և ուսումնական գործընթացում կիրառման համար անհրաժեշտ է հաշվի առնել նախապատրաստական գործընթացի օբյեկտիվ բնութագիրները: Իսկ դրա համար պետք է՝

- ա) առանձնացնել թեստավորման նպատակները,
- բ) ընտրել մանկավարժական իրավիճակներ,
- գ) մանկավարժական իրավիճակները ձևակերպել որպես ուսումնական խնդիրներ,
- դ) ուսումնական խնդիրները վերաձևակերպել որպես թեստային առաջադրանքներ,
- ե) ընտրել և գնահատել պատասխանների էտալոնները,
- զ) մշակել թեստի պլանը,
- է) կազմել թեստի նախնական տարբերակը,
- ը) փորձարկել թեստի նախնական տարբերակը,
- թ) թեստում առաջադրանքները դասավորել՝ հաշվի առնելով համակարգաստեղծ կապերը (մանկավարժական թեստը չի կարող կազմված լինել միայն հեշտ կամ դժվար առաջադրանքներից, այն պետք է ներառի բարդության տարբեր մանարդակների արաջադրանքներ, և՛ հեշտ, և՛ դժվար),
- ժ) փորձարկման արդյունքների հիման վրա կազմել թեստի վերջնական տարբերակը:

Ամփոփելով՝ նշենք, որ մանկավարժական թեստն ավելի արդյունավետ է, եթա թեստավորման որոշակի նպատակների համապատասխանող առաջադրանքների համակարգի կազմման և մշակման ժամանակ դրսևորվում է ստեղծագործական մոտեցում:

Ըստ համացանցի նյութերի պատրաստեց Լուիզա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ

նկարագրմանը: Իրավիճակային թեստեր են խնդիրների և որոշակի տեսակի ալգորիթմների լուծման ծրագրերի տեսքով թեստերը: Այդ թեստերում առաջադրանքների հաջորդականությունը թելադրվում է քննարկվող իրավիճակների խնդիրների լուծման տրամաբանությամբ: Մի խումբ առաջադրանքների կատարման արդյունքները կարող են օգտագործվել նաև դրանց հաջորդող առաջադրանքների կատարման ժամանակ:

Մանկավարժական թեստավորման մեջ առավել մեծ տարածում են ստացել ընտրովի պատասխան պահանջող թեստերը: Համեմատելով դրանք մանկավարժական թեստերի այլ տեսակների հետ՝ անհրաժեշտ է նշել դրանց կատարման արդյունքների մշակման պարզությունը, ինչը զանգվածային ուսուցման շրջանակում ունի հատուկ նշանակություն և արժեք:

Մանկավարժական թեստերի կազմումը շատ աշխատատար և պատասխանատու գործ է: Քանի որ դրանք հանդիսանում են ուսուցման գործընթացի կառավարման մեջ հսկողության, ախտորոշման հիմքը, ապա հասկանալի են դառնում թեստերի բովանդակության և ձևի նկատմամբ բացառիկ բարձր պահանջները: Եթե ընդհանուր ձևով ձևակերպենք, ապա թեստը պետք է հավաստի լինի նրա առջև դրված չափման նպատակների տեսանկյունից:

Թեստի հավաստիության չափը որոշվում է մի քանի եղանակով, օրինակ՝ թեստ-էտալոնի հետ համեմատությամբ և այլ մեթոդներով ստացված առավել ակտիվ ցուցանիշների հետ համադրելու միջոցով:

Թեստը համարվում է բովանդակային առումով հավաստի, եթե չափման արդյունքները համապատասխանում են թեստավորման նպատակներին:

Վերջապես՝ հաջորդականությունը, որով ներկայացված են առաջադրանքներն ու դրանց պատասխանները, տրամաբանորեն հիմնավորված է: Այդպիսի թեստերը մեկ ամբողջություն են կազմում:

Հսկողության, գիտելիքների ախտորոշման համար մշակված մանկավարժական թեստերում հավաստիությունը ունի վճռորոշ դեր:

Թեստավորվողների՝ թեստով աշխատելու արդյունքների գնահատման չափանիշների ընտրությունը պետք է անթերի լինի: Դրանցով պետք է երաշխավորվեն թեստերի հուսալիությունը օբյեկտիվությունը, ապահովելով չափման անհրաժեշտ ճշգրտությունը, հնարավորություն տրվի տարանջատելու թեստավորվողներին:

Համարվում է, որ թեստային առաջադրանքները պետք է միաժամանակ բավարարեն երեք պահանջի՝ բովանդակության կոռեկտություն, ձև ու համակարգաստեղծ հատկանիշների առկայություն: Առաջին պահանջը վերաբերում է խնդիրներին, հարցերին, ուստի այդ հայտանիշը անհրաժեշտ է, բայց բավարար չէ:

ՄԻՐՑԱ ՀԱԼԱՁՅԱՆ

ԳԹԿ քննական
առաջադրանքների մշակման և
մեթոդական օժանդակության
բաժնի գլխավոր մասնագետ

ՎԱՐԴԻԳՅՈՒԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԹԿ հետազոտությունների և
վերլուծությունների բաժնի
առաջին կարգի մասնագետ

**«Ի՞նչ գիտենք մեր մասին» հայագիտական
առարկաներից ազգային ստուգատեսի
թեստավորման արդյունքների վիճակագրական
վերլուծություն**

1. Թեստավորման նպատակը

Ստուգատեսը, որ իր առաջին քայլերն է անում մեր հանրապետությունում, նպատակ ունի պարզելու մեր աշակերտների գիտելիքները հայագիտական առարկաներից՝ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն, ինչպես նաև տեղեկացվածությունը մեր ազգի երախտավորներից՝ գիտության, պատմության, արվեստի, սպորտի և այլ ասպարեզներում, աշխարհագրական առանձնակի կարևորություն ունեցող օբյեկտներից, ճարտարապետական հուշարձաններից և այլ ոլորտներից: Մեր թեստում քննվող գիտելիքները, հմտությունները և ունակությունները այն նվազագույն և հիմնական պաշարն են, որը թույլ կտա մեր աշակերտներին հետագայում դառնալ լավ մասնագետներ իրենց ընտրած մասնագիտություններում և լինել պիտանի ու բանիմաց իրենց ընտանիքների և մեր ազգի համար:

Հետազոտության սկզբունքային տարբերությունը թեստավորման այլ միջոցառումներից այն է, որ որ այս թեստավորումը չունի հավաստագրման կամ դպրոցական գիտելիքների գնահատման նպատակ, ուստի և թեստ կազմողը ազատ է թեստային նյութի ընտրության մեջ: Ավելին, ծրագրային գիտելիքների իմացության ստուգման հետ հավասարապես կարևորվում են աշակերտի՝ հայագիտությունից տեղեկացվածության ընդհանուր մակարդակի պարզումը, այդ մակարդակը ձևավորող (դրական կամ

բացասական առումով) հիմնական գործոնների և դրանց նշանակալիության աստիճանների բացահայտումը:

Ըստ այդմ՝ թեստը ներառում է՝

- հարցեր, որոնց ճիշտ պատասխանելու համար անհրաժեշտ է գիտելիքներ ունենալ դպրոցում ուսումնասիրված հայագիտական առարկաների ծրագրային թեմաներից,
- հարցեր, որոնց ճիշտ պատասխանելուն կնպաստեն այն գիտելիքները, որոնք աշակերտը ձեռք է բերել ինքնակրթության միջոցով. դրանց աղբյուրները կարող են լինել մամուլը, տեղեկատվական այլ միջոցները, «Մանկական հանրագիտարանը» և այլն,
- հարցաշար՝ աշակերտի հակումների, առօրյայի, ընտանիքի, շրջապատի, բնակավայրի և այլնի մասին:

Թեստի առաջադրանքների քանակը, տեսակները, ձևավորումները ընտրվում են թեստավորման նպատակին և ուղղվածությանը համապատասխան: Թեստի հեղինակները առաջնորդվել են հետևյալ սկզբունքներով՝

- առաջադրանքների քանակը չպետք է գերազանցի այն սահմանը, որ կարող է հոգնեցնել տվյալ տարիքի աշակերտին. այսպես կասկածելի կլինի ստացված արդյունքի հավաստիությունը, որոշ առաջադրանքների աշակերտները բոլորովին չեն անդրադառնա,
- կառուցվածքային առումով անհրաժեշտ են և՛ ընտրովի, և՛ կարճ, և՛ ընդարձակ պատասխաններով առաջադրանքներ. սրանցից յուրաքանչյուրով ստուգվում է գիտելիքների, կարողությունների կամ հմտությունների որևէ տեսակ,
- առաջադրանքները պետք է լինեն գրավիչ արտաքին տեսքի առումով, այսինքն՝ հետաքրքիր ձևավորումներով, պատկերազարդումներով և այլն:

2. Թեստի նկարագիրը

2.1. Թեստի կառուցվածքը

Թեստը բաղկացած է 80 առաջադրանքներից, որոնք ընդգրկված են 20 բլոկներում: Յուրաքանչյուր բլոկ պարունակում է 3 առաջադրանք՝

- հայոց լեզվից և հայ գրականությունից,
- հայոց պատմությունից,
- ընդհանուր հայագիտությունից:

Բլոկի առաջին առաջադրանքը հայոց լեզու, հայ գրականություն առարկաներից է, երկրորդը՝ հայոց պատմությունից, երրորդ առաջադրանքը

է: Բացի այդ, հնարավոր է ստեղծվեն բազմագործառնական թեստեր, այսինքն՝ նույն թեստը, կիրառման մեթոդիկայի, թեստավորման արդյունքների մշակման մեթոդիկայի փոփոխման դեպքում, օգտագործվի տարբեր նպատակներով, օրինակ՝ ուսուցման վերահսկման, ախտորոշման, դրա արդյունքների կանխատեսման համար: Գրեթե յուրաքանչյուր թեստ հնարավորություն է տալիս եզրակացություններ կատարելու այն տեխնոլոգիայի արդյունավետության մասին, որով իրականացվել է ուսուցումը:

Կախված թեստավորման ժամանակ թեստավորվողի գործունեության բնույթից՝ կարող են կիրառվել տարբեր տեսակի մանկավարժական թեստեր.

- ընդարձակ պատասխանով առաջադրանքներ ունեցող թեստեր,
- ընտրովի պատասխանով առաջադրանքներ ունեցող թեստեր,
- համակցված թեստեր:

Հայտնի է, որ թեստի յուրաքանչյուր առաջադրանք բովանդակում է դրա լուծման համար տեղեկություն: Դրա բնույթն ու ծավալը կարող են տարափոխվել որպես թեստավորվողին դիտակտիկական օգնություն: Շատ տեղեկությունները կարող են դրական դեր խաղալ ուսուցման և անգամ ախտորոշման համար օգտագործվող թեստերում, սակայն ցանկալի չեն աշակերտների ձեռքբերումները գնահատելիս, երբ թեստի հիմնական գործառույթը վերահսկողությունն է:

Թեստի մյուս առանձնահատկությունն այն է, որ այն կարող է սահմանափակել փորձարկվողի գործողությունները լուծումներ փնտրելիս: Թեստի այս առանձնահատկության գնահատականը նույնպես միանշանակ չէ: Ամեն ինչ պայմանավորված է թեստավորման նպատակներով: Այսպես, հաճախ թեստի միևնույն առաջադրանքը կարող է կատարվել տարբեր գաղափարների, մեթոդների հիման վրա: Գնահատելու համար, թե որքանով է փորձարկվողը տիրապետում մի քանի որոշակի մեթոդների, անհրաժեշտ է բացառել այլ մեթոդներով առաջադրանքը լուծելու հնարավորությունը:

Թեստի ևս մեկ առանձնահատկություն. առաջադրանքների որոշակի ձևակերպումները կարող են թեստավորվողին պարտադրել գործողությունների որոշակի հերթականություն դրանց կատարման ժամանակ և լուծումներ փնտրելու տրամաբանության մեջ: Լավ է դա, թե վատ, միանշանակ գնահատական տալն անհնարին է: Ամեն ինչ կախված է թեստավորման նպատակներից: Օրինակ, եթե թեստի կիրառման հիմնական նպատակը ուսուցումն է, ապա թեստերի այս առանձնահատկությունը հնարավորություն է տալիս փորձարկվողների մեջ ձևավորելու դատողություններ անելու որոշակի մեթոդներ:

Անդրադառնանք նաև, այսպես կոչված, իրավիճակային թեստերին: Դրանցում բոլոր առաջադրանքները վերաբերում են միևնույն իրավիճակի

Մանկավարժական թեստ կազմելու ընդհանուր մեթոդները

Յուրաքանչյուր մարդու առօրյա կյանքում չափումը շատ սովորական գործողություն է: Չափումը դարձել է արտադրության անքակտելի մասը: Սակայն մարդուն վերաբերող չափումները միշտ են եղել արդիական, մշակվել են որոշակի կանոններ, որոնց հիման վրա փորձարկվողներին տրվել են միավորներ: Օգտվելով դրանցից՝ կարելի է ստանալ չափման օբյեկտի մասին նոր տեղեկություններ, իսկ աշակերտների և ուսանողների ուսման վրա ազդեցություն ունեցող գործոնների համակողմանի վերլուծությունը, վիճակագրական-մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ, հնարավորություն է տալիս ճշգրտորեն չափելու մեզ հետաքրքրող ցուցանիշները, համեմատելու դրանք, սահմանելու դրանց միջև կապերն ու փոխկախվածությունը:

Մարդու գիտելիքների, կարողությունների չափումը բարդ գործ է: Չափման միջոցների բացակայության դեպքում գնահատականը ավանդաբար «կառուցվում» է փաստաթղթերի (դիպլոմներ, երաշխավորագրեր և այլն), ստուգողական աշխատանքների, ռեֆերատների արդյունքների և նման բաների հիման վրա:

Ուսուցման նոր տեխնոլոգիաների մշակումը առաջ է բերում մանկավարժական թեստերի համակարգի ստեղծման անհրաժեշտություն, որը հնարավորություն կտա օբյեկտիվորեն գնահատելու ուսումնական գործընթացի տարբեր կողմերը, դրա արդյունքները:


Ըստ կիրառման նպատակների կարելի է առանձնացնել մանկավարժական թեստերի հետևյալ տեսակները.

- առաջադիմության գնահատման թեստեր, որոնցով արագ և արդյունավետ որոշվում է աշակերտների կրթվածության մակարդակը և ուսանողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը,
- չափանիշային – կողմնորոշիչ թեստեր, որոնք հնարավորություն են տալիս համադրելու անհատական ուսումնական նվաճումների մակարդակը և գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ամբողջական ծավալը,
- նորմատիվային – կողմնորոշիչ թեստեր, որոնցով համեմատվում են փորձարկվողները՝ նրանց մակարդակներն ու ուսումնական ձեռքբերումները,
- ատեստավորման թեստեր,
- ուսուցման արդյունքների կանխատեսման թեստեր:

Հարկ է նշել, որ թվարկված թեստերի որոշ մասը առայժմ դպրոցներում և բուհերում չի կիրառվում, դրանց մշակումն ու կիրառումը ապագայի խնդիր

նվիրված է հայ ժողովրդի խորհրդանիշներից որևէ մեկին: Երրորդ առաջադրանքների բովանդակային դաշտը պայմանականորեն անվանել ենք ընդհանուր հայագիտություն:

Ներքևի գծագրում պատկերված է թեստի կառուցվածքային գծապատկերը:



2.2. Միավորների սանդղակը

Թեստի յուրաքանչյուր բլոկ գնահատվում է հետևյալ կերպ՝

- առաջադրանք 1՝ 1 միավոր ճիշտ կատարված առաջադրանքի համար,
- առաջադրանք 2՝ 1 միավոր ճիշտ կատարված առաջադրանքի համար,
- առաջադրանք 3՝ 2 միավոր առաջադրանքի 2 ենթահարցերին ճիշտ պատասխանելու համար, 1՝ միավոր ենթահարցերից միայն մեկին ճիշտ պատասխանելու համար:

Այսպիսով, թեստի առավելագույն միավորը 80-ն է:

Թեստի կատարման համար հատկացվել է 1 ակադեմիական ժամ՝ 45 րոպե:

2.3. Առաջադրանքների տեսակները

Թեստի բլոկների առաջին և երկրորդ առաջադրանքները (հայոց լեզվից, հայ գրականությունից և հայոց պատմությունից) հետևյալ տեսակների են՝ ընտրովի (4-ից մեկը) և կարճ պատասխանով: Ընդ որում, յուրաքանչյուր տեսակից ընդգրկված են նույն քանակությամբ առաջադրանքներ: Այսպիսով, թեստում կա 20 ընտրովի առաջադրանք (10-ական հայոց լեզվից և հայ գրականությունից և հայոց պատմությունից) և 20 կարճ պատասխանով (10-ական հայոց լեզվից և հայ գրականությունից և հայոց պատմությունից):

Բոլոր բլոկների երրորդ առաջադրանքները ընդհանուր հայագիտությունից են: Այդ առաջադրանքները բաղկացած են երկու մասից և գնահատվում են 0, 1, 2 միավորներով: Բլոկների երրորդ առաջադրանքների առաջին մասում պահանջվում է ճանաչել պատկերը (անձ, հուշահամալիր, լեռ, տաճար և այլն), իսկ երկրորդ մասում՝ գրել այդ պատկերի մասին իմացածը (հիմնավորել պատկերվածի կարևորությունը հայ ազգի համար): Այս առաջադրանքների գնահատման յուրահատկությունն այն է, որ, եթե առաջին մասը ճիշտ կատարված չէ կամ ընդհանրապես կատարված չէ, ապա երկրորդ մասի գնահատումը անիմաստ է դառնում: 1 միավոր աշակերտը ստանում է առաջադրանքի միայն առաջին մասը ճիշտ կատարելու համար: 2 միավորը նախատեսված է առաջադրանքի լիարժեք ճիշտ (երկու մասերի) կատարման համար: Ընդ որում, առաջին մասի ճիշտ պատասխանը միարժեք է, երկրորդ մասին պատասխանելիս աշակերտն ազատ է իր մտքերն արտահայտելու համար (այդպիսին է հարցի բնույթը): Այս առաջադրանքների երկրորդ մասի բոլոր հարցերը միանման են (ի՞նչ գիտես նրա մասին)՝ աշակերտին չկաշկանդելու և չշփոթեցնելու համար: Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստուգելու աշակերտի ոչ միայն իմացությունը, այլև մոտեցման տեսանկյունը, տվյալ անձի կամ առարկայի այսինչ կամ այնինչ կողմը կարևորելը:

3. Թեստավորման նախնական արդյունքները

3.1. Մասնակիցների մասին

Որպեսզի թեստավորման արդյունքները հնարավորություն տան հետևություններ և ընդհանրացումներ անելու հայագիտական առարկաներից և ընդհանուր հայագիտությունից մեր աշակերտության գիտելիքների մասին, թեստավորման համար ընտրված թիրախային բազմությունը պետք է լինի բազմատարր: Այսպես՝ ցանկալի է, որ տղաների և աղջիկների թիվը մոտավորապես հավասար լինի, իսկ բնակավայրերի ընդգրկվածության ծավալները համապատասխանեն բնակչության բաշխվածությանը,

Մանկավարժական թեստ կազմելու տեխնոլոգիան

Նախաբան

Պետական կրթական նոր չափորոշիչների մշակումը, ուսուցման և գիտելիքների չափման նոր տեխնոլոգիաների կիրառումը նորից արթնացրեց մանկավարժական հանրության հետաքրքրությունը թեստերի հանդեպ: Լինելով մանկավարժական նորարարությունների մի մասը՝ թեստերը հնարավորություն են տալիս ստանալու շրջանավարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների օբյեկտիվ գնահատականները, ստուգելու նրանց պատրաստվածության և գիտելիքների մակարդակի համապատասխանությունը չափորոշիչներին, վեր հանելու աշակերտների և ուսանողների ուսուցման գործում առկա հիմնախնդիրները:

Կրթական մի շարք կարևորագույն խնդիրներ լուծելու ժամանակակից թեստերի մեծ հնարավորությունները չեն օգտագործվում, իսկ եթե օգտագործվում են, ապա ոչ բավարար չափով, առանց հիմնվելու համաշխարհային գիտական նվաճումների վրա: Մասամբ դա հետևանք է դասավանդողների՝ թեստերի վերաբերյալ տեսության և մեթոդիկայի հարցերին անտեղյակության, համապատասխան գրականության բացակայության, ինչպես նաև թեստեր կազմելու թվացյալ հեշտության մասին շատ տարածված պատկերացումների:

Այսպիսի նյութ ներառող առաջադրանքներին տրված ճիշտ պատասխանների քանակը գոհացուցիչ է:

Այն առաջադրանքներին, որոնցում ընդգրկված նյութը պահանջում է տեղեկացվածության ավելի բարձր աստիճան, տրված ճիշտ պատասխանների քանակը համարում ենք բավարար այն ենթադրությամբ, որ այդ գիտելիքները կարող են ձեռք բերվել նաև ավելի բարձր տարիքում:

Կան նաև այնպիսի թեմաներ, որոնց դեպքում ցանկալի կլիներ ստանալ ավելի բարձր արդյունք, մասնավորապես անընդունելի է ճիշտ պատասխանների փոքր թիվը այն թեմաներից, որոնք ուսումնասիրվում են դարձյալական ծրագրով:

Որոշ առաջադրանքներ էլ ընտրվել են առանձնապես լավ գիտելիքներ ունեցողներին տարբերակելու համար: Այս առաջադրանքներին տրված ճիշտ պատասխաններ նույնպես առկա են:

Վստահ ենք, որ այսպիսի ստուգատեսները արժեքավոր են աշակերտության հիմնարար գիտելիքների, հայագիտությունից, ազգային արժեքներից տեղեցվածության աստիճանի մասին պատկերացում կազմելու, դասավանդման և ազգային գաղափարախոսության ոգով դաստիարակության հարցում նկատված դրական միտումները արձանագրելու և թերությունները վեր հանելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների գնահատման հայեցակարգ, «Էդիթ Պրինտ», Երևան 2005, 12 էջ:
2. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության չափորոշիչ, «Անտարես», 2004, 71 էջ:
3. Կ.Հարությունյան, Ա. Բաղդասարյան, Մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից «TIMSS-2003» ստուգատեսը Հայաստանում, «Աստղիկ» գրատուն, 2004, 53 էջ:
4. Մ. Հալաջյան, Լ. Հակոբյան, Ս. Սկրտչյան, Վ. Սկրտչյան, Հայագիտական առարկաների թեստավորման նախափորձարկման արդյունքների մասին, Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, թիվ 9, 2012:
5. Ա. Բաղդասարյան, Մ. Հալաջյան, Ս. Մելիքյան, Ս. Սկրտչյան, Վ. Սկրտչյան, Ի՞նչ գիտենք մեր մասին, թեստավորում հայագիտական առարկաներից, Մանկավարժություն, թիվ 5, 2012:

թեստավորումն անցկացվի մայրաքաղաքում, միջին մեծության և փոքր քաղաքներում, գյուղերում:

Ստորև տրվում են տվյալներ մասնակցողների մասին:

Թեստավորմանը մասնակցողներից՝

- տղաներ են 50,3%-ը,
- աղջիկներ՝ 49,7%-ը՝:

Ըստ բնակավայրի՝

- մայրաքաղաքի բնակիչներ են 62.3%-ը,
- միջին մեծության քաղաքների բնակիչներ՝ 19.2%-ը,
- փոքր քաղաքների բնակիչներ՝ 3.1%-ը,
- գյուղերի բնակիչներ՝ 15.4%-ը:

Ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում նաև որոշ տվյալներ աշակերտների ընտանիքների, զբաղմունքների, հակումների, դասերի պատրաստմանը տրամադրվող ժամանակի և այլնի մասին: Ըստ ստացված տվյալների՝

- բազմանդամ (4 հոգի կամ ավելի) ընտանիքներից են 15,5%-ը,
- ոչ բազմանդամ՝ մինչև 4 անձ՝ 82,6%-ը:

Մասնակիցների 2,4%-ը այս հարցին չի պատասխանել:

«Ո՞րն է քո ամենասիրած առարկան» հարցին տրված պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ՝

- Ամենամեծ թվերը գրանցվել են մաթեմատիկա՝ 26,4%, և հայոց լեզու և հայ գրականություն՝ 17,6 %, առարկաների դիմաց: Հնարավոր է, որ աշակերտները այս առարկաներին նախապատվություն են տվել՝ տուրք տալով դրանց կարևորության աստիճանին:
- Հաջորդ տեղերում են հայոց պատմությունը և օտար լեզուները՝ հավասար քանակներով՝ մոտ 11, 5%:
- Բնագիտական առարկաները ավելի քիչ են ընտրվել՝ 3-6%:

Հարցին չի պատասխանել 3%-ը:

«Ի՞նչ ես ուզում դառնալ» հարցին տրված պատասխանների ամենամեծ թիվը գրանցվել է «Չեմ որոշել» սյունակում՝ 21,6%: Բավականին մեծ թվով աշակերտներ՝ 23,6%-ը, չեն ընտրել տրված տարբերակներից ոչ

մեկը և նշում են կատարել «Այլ» սյունակում: Մնացած պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ամենամեծ թվերը գրանցվել են «Բժիշկ»՝ 12,2%, և «Իրավաբան»՝ 11,1% սյունակներում,
- սպորտսմեն ցանկանում է դառնալ մասնակիցների 6,8%-ը,
- ծրագրավորող՝ 5,1%-ը,
- տնտեսագետ՝ 4,4%-ը,
- արհեստավոր՝ 3,4%-ը:


Մյուս տարբերակները՝ գյուղատնտես, գործարար, լրագրող և այլն, քիչ են ընտրվել՝ մինչև 2-ական տոկոս:

Հարցին չի պատասխանել մասնակիցների 2,4%-ը, որոնց, ի վերջո, նույնպես կարելի է դասել չկողմնորոշվածների մեջ:

3.2.Միջին միավորները

Ընդհանուր թեստի միջին միավորն է՝ 48,76: Սա նշանակում է, որ թեստը եղել է միջին բարդության, աշակերտները ունեցել են բավարար գիտելիքներ հարցերին պատասխանելու համար և փորձել են իրենց գիտելիքների սահմաններում պատասխանել հնարավորինս շատ հարցերի:

Արդյունքների հիստոգրամը ներկայացնում է հետևյալ պատկերը՝



Նվազագույն միավորն է 12-ը, առավելագույնը՝ 72-ը: Այսինքն՝ չկան այնպիսի աշակերտներ, որոնք թեստ-գրքույկը ամբողջությամբ դատարկ են թողել կամ տվել են միայն սխալ պատասխաններ: Սակայն չկան նաև այնպիսիք, որոնք ճիշտ պատասխանել են բոլոր հարցերին: Որսխալի է, որ հարցերի կեսից ավելին ճիշտ պատասխանած աշակերտների թիվը գերազանցում է կեսից պակասին ճիշտ պատասխանածների թիվը:

խան տիպերի ճիշտ պատասխանների քանակները բավականին մոտ են իրար: Այստեղից կարելի է հետևություն անել և՛ թեստի մասին (այս երկու ենթաթեստերը բարդության աստիճանով համարժեք են), և՛ այն մասին, որ աշակերտները այս երկու առարկաներին տիրապետում են գրեթե հավասարապես:

Երկու ենթաթեստերում էլ կան առաջադրանքներ, որոնց պատասխանել է մասնակիցների 90 և ավելի տոկոսը:

Հայոց լեզվից և հայ գրականությունից այդ առաջադրանքներն են՝

- 4-րդը՝ այբուբենի մասին,
- 19-րդը՝ բառի փոխաբերական իմաստի մասին:

Հայոց պատմությունից այդպիսի առաջադրանքներն են՝

- 2-րդը՝ Տիգրան Մեծի պատկերով մետաղադրամի մասին,
- 14-րդը՝ հայոց գրերի ստեղծողի մասին,
- 23-րդը՝ հայկական պետական կազմավորումների մասին:

Կան նաև շատ բարդ առաջադրանքներ, որոնց պատասխանել է մասնակիցների 20 տոկոսից պակասը: Հայոց լեզվից և հայ գրականությունից կա այդպիսի մեկ առաջադրանք՝

- 58-րդը՝ Ավ. Իսահակյանի «Ազգային երգը» պատմվածքի մասին:

Պատճառը հավանաբար այդ ստեղծագործության ոչ այնքան հանրահայտ լինելն է, թեև ստեղծագործությունը ծրագրային է:

Հայոց պատմությունից այդպիսի առաջադրանքներն են՝

- 38-րդը՝ Երվանդյան Տիգրանի մասին,
- 44-րդը՝ 62 թ. հայ-պարթևական զորքերի տարած հաղթանակի մի դրվագի մասին:

Երկու առարկաների ընտրովի առաջադրանքներին պատասխանել են ավելի լավ, քան կարճ պատասխանով առաջադրանքներին, ինչը սպասելի էր:

Պետք է նշել, որ վերը բերված բոլոր բարդ առաջադրանքները կարճ պատասխանով են: Սակայն կարճ պատասխանով են նաև հեշտ առաջադրանքների մի մասը:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշակերտները այս կամ այն չափով ունեն հիմնարար գիտելիքների պաշար, դրանք կիրառելու կարողություն, հայ ժողովրդի համար արժեք ներկայացնող անձերից և կոթողներից տեղեկացվածություն և դրանց մասին մտքեր շարադրելու հմտություն: Չկան արտառոց երևույթներ, ինչպես, օրինակ՝ խորհրդանիշ հանդիսացող անձի, կոթողի և այլնի համատարած չճանաչում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր երեք ենթաթեստերի արդյունքները իրար համարժեք են, բավական մոտ են դրանց նվազագույն, առավելագույն և միջին միավորները: Երեք ենթաթեստերից էլ մասնակիցների մեծ մասը՝ 60%-ից ավելին, հավաքել է բավարար, միջին և բարձր միավորներ: Ամենացածր միավորները գրանցվել են ընդհանուր հայագիտությունից. բարձր է բավարար միավորներ չհավաքածների տոկոսը: Անհրաժեշտ է նկատել, որ այս ենթաթեստի առաջադրանքները բաղկացած են երկու մասից՝ ենթաառաջադրանքներից, որոնցից մեկը կարճ պատասխանով է, մյուսը՝ ընդարձակ: Համեմատական ցածր ցուցանիշի հարցում էական դեր է խաղացել առաջադրանքի երկրորդ մասը վերը նշված պատճառով: Եթե դիտարկում ենք միայն առաջին մասը, ապա բավարար միավորներ չհավաքածների տոկոսը կազմում է շատ ավելի փոքր թիվ՝ 6,8%՝ բավականին մոտ մյուս երկու ենթաթեստերի համապատասխան ցուցանիշին: Երկրորդ մասի չկատարման պատճառը, ինչպես ասվեց, ավելի հաճախ ոչ թե չինացությունն է, այլ չկողմնորոշվելը:

3.4. Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներին տրված ճիշտ պատասխանների հարաբերակցությունը

Մեր ուսումնասիրության համար հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, թե աշակերտները ինչպես են պատասխանել առաջին և երկրորդ ենթաթեստերի (հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն) ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներին: Առաջադրանքները, ըստ կառուցվածքային տիպերի, թեստում բաշխված են հավասարապես. թե՛ հայոց լեզվի և հայ գրականության, թե՛ հայոց պատմության ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքները 10-ական են: Այդ առաջադրանքներին տրված ճիշտ պատասխանների տոկոսները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Առաջադրանքի տիպը	Առարկան	Ճիշտ պատասխանների տոկոսը	Ընդամենը
Ընտրովի	Հայոց լեզու և հայ գրականություն	73.5	72.2
	Հայոց պատմություն	70.9	
Կարճ պատասխանով	Հայոց լեզու և հայ գրականություն	58.2	57.45
	Հայոց պատմություն	56.7	

Ինչպես երևում է աղյուսակից, հայոց լեզվի և հայ գրականության և հայոց պատմության առաջադրանքների կառուցվածքային համապատաս-

Հիստոգրամը փոքր-ինչ շեղված է դեպի աջ, ինչը ցանկալի ցուցանիշ է այսպիսի թեստի և թեստավորման տվյալ նպատակի համար:

Ամենահաճախ հանդիպող միավորն է 48-ը:

Ընդ որում՝ միավորները բաշխված են համաչափ. աշակերտների մոտ 25%-ը պատասխանել են 12-39 հարցի, 25%-ը՝ 58-72 հարցի, 50%-ը՝ 40-57 հարցի, այսինքն՝ թեստի հարցերի կեսից ավելին:

Աշակերտների կեսը հավաքել է 12-49, կեսը՝ 50-72 միավոր:

Ստացված արդյունքները հիմնականում գոհացուցիչ են, սակայն թեստի առաջադրանքների նյութը ընտրված է այնպես, որ այդ տարիքի աշակերտների համար կարելի էր ակնկալել նվազագույնը 25 միավոր, այսինքն՝ ճիշտ պատասխաններ առաջադրանքների մեկ քառորդից քիչ ավելին: Դրանք այն առաջադրանքներն են, որոնք ստուգում են հիմնարար գիտելիք: Մինչդեռ ոչ բոլորն են հաղթահարել նվազագույն շեմը:

Դպրոցական գնահատման միավորներով արտահայտվելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը՝¹

1-3 միավոր՝ անբավարար կստանան աշակերտների 5,4%-ը: Բավարար, միջին և բարձր գնահատականներ ստացող աշակերտների տոկոսային հարաբերակցությունը ներկայացվում է աղյուսակով:

Գնահատականը	Միավորը	Աշակերտների թիվը տոկոսներով
4	25-32	8,1%
5	33-40	13,5%
6	41-48	18,9%
7	49-56	23,3%
8	57-64	19,6%
9	65-72	11,5%
10	0	0%

Բնականաբար թեստը չպետք է կազմված լիներ այնպես, որ ստացվեր 100 տոկոսանոց կամ դրան մոտ արդյունք, քանի որ ուսումնասիրության համար հետաքրքրություն է ներկայացնում նաև տարբերակումը: Թեստը ներառում է նաև առաջադրանքներ, որոնք ավելի խոր գիտելիք են պահանջում, ինչպես նաև առաջադրանքներ, որոնց կարող էին պատասխանել առանձնապես հետաքրքրվողները:


¹ Տես Սովորողների գնահատման հայեցակարգ, «Էդիտ պրինտ», Երևան, 2005:

3.3. Ենթաբնույթի մասին

Վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեստը, ինչպես նաև նրա երեք մասերը՝ ենթաբնույթերը, եղել են հուսալի: Ինչպես ասվել է, թեստի յուրահատկություններից է 3 թեստ մեկում կառուցվածքը, ուստի կարևոր է, որ այդ երեք մասերը՝ ենթաբնույթերը, միմյանց համահունչ լինեն իրենց վիճակագրական տվյալներով:


Թեստերի երեք մասերի հիստոգրամները ներկայացնում են հետևյալ պատկերները՝

1. Հայոց լեզու և հայ գրականություն



Այս ենթաբնույթից մասնակիցները 20 հնարավորից վաստակել են նվազագույնը 4, առավելագույնը՝ 19 միավոր: 77%-ը վաստակել են միջինից բարձր միավորներ՝ 10 և ավելի: Ամենահաճախ հանդիպող միավորն է 15-ը՝ 12.2%: Միջին միավորն է 13,17:


2. Հայոց պատմություն



Այս ենթաբնույթից մասնակիցները 20 հնարավորից վաստակել են նվազագույնը 3, առավելագույնը՝ 20 միավոր: 83,1%-ը վաստակել են միջինից բարձր միավորներ՝ 10 և ավելի: Ամենահաճախ հանդիպող միավորն է 16-ը՝ 12,8%: Միջին միավորն է 12,77-ը:

Այս ցուցանիշը օրինաչափ է նրանով, որ հայոց պատմությունը համեմատաբար նոր առարկա է այս տարիքի դպրոցականների համար, քան հայոց լեզուն և հայ գրականությունը, որն ուսումնասիրում են առաջին դասարանից:

3. Ընդհանուր հայագիտություն



Այս ենթաբնույթից մասնակիցները 40 հնարավորից վաստակել են նվազագույնը 1, առավելագույնը՝ 39 միավոր: Ընդ որում, 1 միավոր վաստակել է միայն 1 մասնակից: Հաջորդ ամենացածր միավորը 4-ն է (2 մասնակից):

63,2%-ը վաստակել են միջին և բարձր միավորներ՝ 20 և ավելի: Ամենահաճախ հանդիպող միավորն է 29-ը՝ 5,4%: Միջին միավորն է 22,81:

Միջին միավորների համեմատաբար փոքր թիվը (համեմատած մյուս երկու ենթաբնույթի հետ) պայմանավորված է այս ենթաբնույթում առկա ընդարձակ պատասխանով ենթաառաջադրանքներով: Հաճախ մասնակիցը ճանաչել է տվյալ գործչին կամ վայրը, կոթողը և այլն, սակայն չի կողմնորոշվել, թե ինչ գրի դրա մասին: Այնուամենայնիվ այս ենթաբնույթի առաջադրանքները նույնպես կատարված են բավարար չափով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է երեք ենթաբնույթերի արդյունքների համամասնությունը՝ ըստ դպրոցական գնահատման 10-ական միավորանոց սանդղակի:

Ենթաբնույթ	Միջին միավորը	Նվազագույն միավորը	Առավելագույն միավորը	Նշված միավորները հավաքածների տոկոսները				
				1-3	4	5-6	7-8	9-10
Հայոց լեզու և հայ գրականություն	6,6	2	9,5	5,7	9,5	34,8	41,9	8,1
Հայոց պատմություն	6,4	1,5	10	10,5	4,1	41,6	41,2	4,4
Ընդհանուր հայագիտություն	5,7	0,25	9,75	22,3	14,5	29,8	27,7	5,7